



35837

ՊՐՈՖԵՍՈՐ
ԲԺՇԿԱՊԵՏ Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆ

№ 24

ԵՐԿՐՈՐԴ ՄՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏՈՒԲԵՐԿՈՒԼԵՈԶ

ԵՒ ՆՐԱ ԴԵՄ ԿՌՈՒԵԼՈՒ ՀՅԱՐԱՄԱՑԵԼԻ
ՄԻ ՃՈՅՆԵՐ

ՅԵՐԵՎԱՆ



Ձ

ՆՈՐ - ԶՈՒՅՆ
ՏՅԱՐԱՆ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԻ

1936



ՅԱՌԱԶԱԲԱՆ

Տուբերկուլիոզը ոչ միայն անհատական հիւանդութիւն է, որ կարող է դիպչել միայն հիւանդացած աճանաւորութեան ու նրա ընտանիքին, այլ և հս սարակական մի ախտ է: Տուբերկուլիոզը ոչ միայն նպաստում է առանձին ընտանիքների մահանալուն, այլ՝ տանելով առանձին զոհեր, չնորհիւ իր քրօնիկական ընթացքին և վարակման բնոյթին, այնպէս է ընթանում, որ հիւանդութիւնը տարածում և արմատանում է հասարակութեան լոյն շրջանների մէջ: Ընդգրկելով զոհերի նորանոր բայօններ, տուբերկուլիոզը տանում է մարդկութիւնը դէպի անկումն այն տեղերում, որտեղ նա խոր արմատներ է ձգել Սյապիսի պայմաններում բժիշկների կազմը անկարող է մենակ տանել տուբերկուլիոզի դէմ մզւած կոփել: Նրան պիտի միանայ լատ կարելոյն ամբողջ ազգաբնակութիւնը: Միայն այն ժամանակ կարելի է յուսալ, որ մենք կարող կ'լինենք, եթէ ոչ ամբողջովին արմատախիլ անել մարդկութեան այդ չարեքը, գոնէ սահմանափակել նրա ազդեցութեան շրջանը:

Տուբերկուլիոզի դէմ կուելու համար հասարակութեանը առաջ քաշելու միջոցներից մէկն է՝ հիւանդութեան մասին գիտելիքներ տարածելը՝ ցուցանանդէսների, հրապարակայիշն դասախոսութիւնների, բրօշիւնների և այլ նման միջոցներով: Մեր գրականութիւնը շատ աղքատ է այդ տեսակ ժողովրդական դրւածքներով և բժագ: պրօֆ: Գ. Մենքարեանցի բրօշիւրը առաջնակարգ գրւածներից մէկն է մեր գրական ասպարէզում: Նա մի մեծ աջակցութիւն է տուբերկուլիոզի մասին գիտելիքներ տարածելու գործում, և ես հաճութեամբ համաձայնեցի գրել այս յառաջաբանը բժագ: Պրօֆ Մենքարեանցի բրօշիւրի համար Տալով հանրամատչելի ձեռվ գիտական անհրաժեշտ տեղեկութիւններ, բրօշիւրը միենոյն ժամանակ նպաստում է աւելի գիտակցորէն վերաբերւել դէպի այդ հիւանդութիւնը, հասկանալ նրա էութիւնը և այն միջոցները, որոնց օգնութեամբ միայն հնարաւոր է բացիօնալ կոփել տուբերկուլիոզի դէմ:

Պրօֆ. Դիմ. Պլեսնեօվ

ՏՈՒԲԵՐԿՈՒԼԵՑ - ԹՈՔԱԽՍՁՂ ԵՒ ՆՐԱ ԴԵՄ
ԿՈՌԻԵԼՈՒ ՀԱՆՐԱՄԱՏԶԵԼԻ ՄԻՋՈՑՆԵՐ

ՊՐՈՅԵԿՏՈՐ – ԲԺՇԿԱԳԵՑ Գ. ՄԵՀՐԱԲԵՍՆՅԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏՈՒԲԵՐԿՈՒԼԵՈԶԻ ՄԱՍԻՆ

Տուբերկուլիօզը առաջանում է նրանից, որ մարդուս օրգանիզմի մէջ մտնում է որոշ հիւանդացնող թոյն։ Բացի այդ՝ անհրաժեշտ է, որ վարակւած օրգանիզմը «տրամադրուած» լինի ընդունել այդ թոյնը և զարգացնել հետագայ հիւանդութիւնը։

Այդ «տրամադրութիւնը» կարող է լինել ժառանգական և ստացական։ Ուրեմն տուբերկուլեօզի առաջացման համար հարկաւոր են՝ 1) հիւանդութիւն առաջ բերող պատճառներ և 2) օրգանիզմի ընդունակութիւնը՝ ենթարկել այդ պատճառներին։ Եթէ այդ պայմաններից մէկն ու մէկը բացակարում է, հիւանդութիւնը չի գարգանում։

Ուն թոյնը, որ առաջ է բերում այդ հիւանդութիւ-
վերիննը, աստիճանի մի փոքրիկ կենդանի էակ է (միկօ-
օրդանից) և պատկանում է ստորին բուսականութեան:

Նրան կարելի է տեսնել միայն խոշորացոյցով (միկրոսկոպ)։ Koch-ը, որ գտել է այդ փոքրիկ սունկը, անտանել է նրան տուբերկուլեօպային բացիլ։ Այդ բացիլը մտնելով մարդուս օրգանիզմի մէջ, կարող է տեղաւորւել զանագան մասերում։ և նրա ներկայութիւնը մի գրաւական է զարգացնելու հիւանդութեան պրօցեսսը, իսկ այդ պրօցեսսը առաջ է բերում կորեկանման հատիկներ—իւրատեսակ մախրանման ուռուցքներ, որոնց զատ հեշտ կարելի է գտնել այն մարդկանց դիմակների վրայ, որոնք մեռել են տուբերկու-

լեօղից: Այդ ուռուցքների տուբերկուլների անունով Էլ հե-
ւանդութիւնը կոչում է Տուբերկուլեօզ, որ նշանակում է
կորեկահատ ցաւ:

Ինչպէս ասացինք, տուբերկուլեօզը կարող է կանգ առ-
նել մարդկալին մարմնի զանազան օրգաններում, բայց ամե-
նայաճախ նրանից վարակւում են թոքերը: Եւ թոքերի
տուբերկուլեօզն է ամենքին յայտնի և սոսկալի կերպով
տարածւած հիւանդութիւնը, որը մեր առօրեայ կեանքում
կոչում են բարակացաւ, իզուր չէ տւած նրան այդ անու-
նը. այդ հիւանդութիւնը սովորաբար երկարում է և քանի
գնում՝ հիւանդը այնքան աւելի է նիշարում, ճարպը նրա
մարմնից ոչնչանում է, մկանունքները ատրօֆիայի են
ենթարկւում, հիւանդը բառիս բուն մտքով մաշւում,
բարականում է:

Տուբերկուլեօզ ասելով՝ մեր գրւածքի մէջ պիտի հաս-
կանանք թոքերի տուբերկուլեօզը, թոքախտը, կամ բա-
րակացաւը:

Թոքախտի տարածումը

Այս հարցին, թէ ո՞րտեղ է տարածւած տուբերկուլեօզը,
կարելի է կարճ պատասխանել. — «Այսն տեղ»: Զկայ ոչ
մի երկիր, ոչ մի ազգ, որին խնայէր այդ հիւանդութիւնը.
բայց աւելի համաճարակի բնաւորութիւն ունի նա հիւսի-
սային կիսագնդի բարեխառն գոտիում: Մահացութեան թիւը
տուբերկուլեօզից՝ Եւրոպական քաղաքներում ամեն մի
10,000 մարդու վրայ բաժանւում է հետևեալ կերպով:

Փարիզ 38,1

Բուդապեշտ 38,0

Վենետիկ 32,9

Պետերբուրդ	.	.	.	29,8
Խրիստիանիա	.	.	.	26,9
Մոսկավ	:	.	.	24,1
Ստոկհոլմ	.	.	.	23,4
Բերլին	.	.	.	21,4
Կոպէնհագէն	.	.	.	21,3
Բրիստոլ	.	.	.	19,3
Հռոմ	.	.	.	17,7
Լոնդոն	.	.	.	14,5

1894 թւի Բուդապեշտի ժողովրդական առողջապահ
հական կօնդրէսում պրօֆէսոր Leyden ը ցոյց տւեց, որ
Գերմանիայում թոքոխտով հիւանդ են 1,300,000 մարդ:
Այդ թւից տարեկան մեռնում են 170,000—180,000, որ
կազմում է $\frac{1}{7}$ ընդհանուր մահացութեան: Մեծ պատե-
րազմների կոտորածները այս թւերի հետ համեմատաբար
պիտի չնչին թւան: Օրինակ, 1870 թւի պատերազմի կո-
տորածները չեն կազմում մինչեւ անգամ քառորդը այն
մարդկանց, որոնք մի տարւալ ընթացքում զոհ են գնում
այդ էպիդեմիային.

Ուստաստանում գրութիւնը աւելի անմիտար է, ա-
մեն մի 10,000 բնակչի վրայ հաշւեգրած է իբրև հիւանդ
տուբերկուլեօզով:

1895 թ.	.	.	.	21,1
1896	»	.	.	22,3
1897	»	.	.	22,8
1898	»	.	.	23,1
1899	»	.	.	25,4
1900	»	.	.	25,6
1901	»	.	.	27,7

1902	»	.	.	.	29,7
1903	»	.	.	.	29,8
1904	»	.	.	.	29,8
1905	»	.	.	.	20,7

Իսկ մեռնողների թիւը տուբերկուլեօղից մի քանի քաղաքներում հասնում է հետևեալ քանակութեան.

Նժ. Նովգորոդ	34,07
Պետերբուրգ	30,04
Աստրախան	29,39
Մոսկվա	26,03
Նիկոլաև	25,30
Օգեստա	.	.	.	:	25,09
Վարչառա	24,44
Սարատով	23,07
Թիֆլիս	22,03
Վիլնա	,	.	.	.	19,60
Բագու	16,06

Տուբերկուլեօղի հասարակական-սննդական նշանակութիւնը

Թողնելով մի կողմ նոյն իսկ նրա սոսկալի տարածւելը, տուբերկուլեօղը զնորհիւ իւր մեծ նշանակութեան հասարակական-տնտեսական տեսակէտից, մնացած ժողովրդական հիւանդութիւնների մէջ առաջնակարգ տեղ է բռնում:

Այս եզրակացութեանը գալիս ենք՝ առաջ ունենալով հետևեալը:

1) Մարդ (թոքախտով հիւանդանում է իւր աշխատելու ընդունակութեան ամենալաւ հասակում) Հազար թոքախտաւորներից մեռնում են հետևեալ հասակում:

Մինչև 5 տարեկանը	.	50 մարդ:
5-ից - 10	}	
10-ից - 15	»	20 - 30 մարդ:
15-ից - 20	}	
20-ից - 25	»	200 - 250

(Բառ պատճենագոր Gerhardt-ի հաշվետութեան):

2) Թոքախտից հիւանդանում է աւելի շուտ արական սեռ, որի բանւորական ոլժն աւելի ակնյալանի է և աւելի կարեոր: Տերլինում 10,000 տղամարդուց 40 - 50 տարեկան հասակում ամեն տարի մեռնում են 101 մարդ, իսկ 10,000 կանացից նոյն հասակում մեռնում են 4+:

3) Թոքախտն աւելի շատ տարածւած է բանւորների և արհեստաւորների մէջ, որոնց բարեկեցութիւնը անմիջապէս կախւած է իրանց աշխատելու ընդունակութիւնից, իսկ այդ բանը կախւած է առողջաւթիւնից:

Սակայն այն պնդումը, թէ իբր թոքախտը սոսկալի կերպով տարածւած է ազգաբնակութեան միայն ազքատ դասակարգելի մէջ, թէ իբր նա պարօքատարների հիւանդութիւնը է, այդ ճիշտ չէ: Դրան հակասում են Ուստական, Նւեդական և շատ ուրիշ թոքախտառազ քրօնիկունները, և վերջապէս պատմութեան մէջ մենք գտնում ենք հակառակ փաստեր՝ Կապոլէոնի որդին, Լուգովիկոս XVI-ի որդին, Ուստաց Գահաժառանգ Անձ Իշխան Գէորգիլ Ալէքսանդրովիչ, Շիլլէր, Զեխով, Բէլինսկի, Դօբրօլիւբով և ուրիշները, որոնք բոլորը մեռել են այդ հիւանդութիւնից:

4) Թոքախտը սովորաբար ընթանում է շատ դանդաղ, յաճախ ամերգ տարիներ և զնորհիւ այդ ուրուցնութեանը նա աւելի մեծ վնաս է հասցնում ժողովրդական բարեկե-

ցութեանը: Նատ հեշտ է երեակալել, թէ ինչպիսի ցաւ ու հոգսի մէջ է ընկնում մի ընտանիք, երբ նրան կերտէրողը ոչ միայն շաբաժներով և ամբաներով մնում է առանց աշխատանքի, այլ և նա պիտի օգտուի ուրիշի փողերով և աշխատանքով իրեն բժշկելու համար: Գերմանիայի հիւանդանոցային գրամարկները հիանալի գիտեն, թէ ինչպիսի ծանր բեռ է ընտանիքի համար այդ աւհրաժեշտութիւնը՝ մշտապէս պահել իր անդամներից մէկին:

5) Վերջապէս թոքախտը երեան է գալիս ոչ միայն իբրև բարակացաւ, այլ և առաջ է բերում մի շարք ուրիշ հիւանդութիւններ: Գալլուկ, (Lupus Vulgazis), որ փշացնում է մարդուս երեսը, ոսկորների գեղնուկը, ռւզեղի մահացու բորբոքումը և երեխաների աղիքների վտանգաւոր վնասւելը—այդ բոլորը նոյն տուբերկուլեօզային բացիլի վարակման հետեանքն են:

Հասարակութիւնը եւ պետութիւնը տուրիկուլեօզի դևմ մահառման զործում

Համաճարակի հանգէպ, որ այնքան ուժեղ կերպով վնասում է ժողովրդական բարեկեցութեանը և ընդհանուր անհոգութիւնը, որ դեռ նկատում է ժողովրդի մէջ, աւելի քան անհասկանալի է: Կամ թէ գուցէ գա որոշ հիմք ունի, գուցէ այդ անտարբերութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հլու հպատակութիւն լուիտենական և անխուսափելի չարիքի առաջ:

Ոչ, հազար անգամ ոչ...

Մարդը, որ կարողացել է յաղթել անցած դաշերի ահաբեկու չարիքներին՝ ժանտախտին, ծաղկին և խօլերալին, դիֆտերիտին, այս դէպքում էլ վերջնականապէս անոյժ չէ: Բայց մի այսպիսի ուժեղ թշնամու դէմ կուելու համար

պիտութեան ոլժերը բաւական չեն. պատերազմը նրա դէմ պիտի տարւի ամեն տեղ և ամեն ուղղութեամբ: Խոկական օգնութիւն կառող է տալ միայն ժողովրդի բոլոր խաւերի պլանոմէր աշխատանքը, երբ ամեն մի տնդամ պատրաստ է աշխատել և զոհաբերութիւն անել ընդհանուրի շահների համար, որոնք կտպւած են նրա սեփական շահների հետ:

ԲԵՐԻԲԻ ԿՕՆԳՐԵՍԻ

Այս վերջին միտքը 1899 թւի հերիխի տուբերկուլեօզին հարցին նւիրւած կօնդրէսի պատճառը եղաւ:

Ալսեղ գլխաւոր ուշադրութիւնը դարձրած էր ալդ հիւանդութեան վրայ, որի առաջին աշխատանքի պայմանն է դառնում նրա դէմ հեշտութեամբ կռւելը, բայց լաւ ապագայի մենք կհասնենք միայն այն ժամանակ, երբ հասարակութիւնը ճիշտ գաղտափար կռւնենալ տուբերկուլեօզի մասին, երբ նա ինքը կմշակի որոշ սկզբունքները, որոնց վրա հիմնւելով առաջ կտանի կռիւը ընդգէմ մարդկութեան ալդ մեծ շարիքի:

Ալգակէս ուրեմն, նախ և առաջ անհրաժեշտ է հասարակութեան լայն խաւերին ծանօթացնել տուբերկուլեօզի և նրա դէմ գիտութիւնով մշակւած կռւելու միջոցների հետ:

II

ՀԻՒԾՆԴԱՅՈՂ ԹՈՅՑՆԸ

1. Նրա բնոյթը և տարածումը:

Հիւանդութեան գրգռիչ պատճառները

Տուբերկուլեօզի գրգռիչ պատճառը ինչպէս լիշտած է, ներկայացնում է առանձին մի բացիլ, որը երկարած ձողի է նման: Նրան կարելի է տեսնել միայն խոշորացրած դէպ-

քում, այն էլ՝ եթէ նրան որոշ գունաւորում տանք։ Ի՞ր զարդացման և բազմանալու համար այդ սունկը կարօտ է որոշ հողի, որն այս դէպքում մարդու կամ կենդանու օրգանիզմն է։ Այս ընական սննդատու միջավալից, դուրս՝ տուբերկուլեօզալին բացիլը չի գտնում պայմաններ իւր զարդանալու համար։ Սակայն այդ բարենպատճառ պայմանների, էլ դուրս՝ նա կարող է ապրել որոշ ժամանակ և նորից տեղափոխւելով կենդանի օրգանիզմը, ինչպէս հարկն է զարդանալու ընդունակ լինել։

Հիւանդացնող թոյն պարունակողները

Այսն մի թոքախտաւոր իր օրգանիզմում պարունակում է հիւանդացնող սաղմեր, սակայն չպիտի կարծել, որ նա սարսափելի վտանգաւոր է շրջապատողների համար։ Պիտի ընդունել իբրև հիմնական սկզբունք, որ հիւանդացնող սաղմերը օրգանիզմի միայն տեսանելի արտադրութիւններով կարող են անցնել մէկից միւսը և ոչ թէ անտես գոլորշացումներով, որոնց հետ կուելը կարծես թէ անհնարին է (ինչպէս այդ յաճախ ընդունւած է)։

Հիւանդութեան տարածումը

Հիւանդութեան տարածման ազաիւրները կարող են լինել՝

1) Հիւանդի թոքերից առաջացած խորխը և նրա հետ խառնւած թուքը.

2) Գեղձախտաւորների և թոքախտաւորների վահրստ խոցերը, երեմն նաև արտաթորութիւնը, մէզը և կաթը:

3) Թոքախտաւորների օրգանների մասերը և նրանց դիակները:

4) Բոլոր բնակարանները և իբրերը, որոնք չփուլմ են

թոքախտաւորների և նրանց դիակների հետ։

Յետոյ կարևոր է իմանալ, որ յիշւած առարկաները քանի ինքն իրենց խոնաւ են և գտնւում հն հեղուկի մէջ, նրանց միջի սաղմերը օդի մէջ չեն անցնում։ Իսկ եթէ նրանք չըրանում են և փոշիանում, նրանց հետ միասին տուբերկուլեօզալին ձողիկները ցրւում են ամենուրեք և վերջինը նստում են յատակի, կահկարասիների և ուրիշ իբրերի վրայ։

Փոսի

Այստեղից պիտի եզրակացնել, թէ ինչքան լուրջ գեր է խաղում հիւանդութեան տարածման մէջ փոշին և ցեխը։ Բացի այդ՝ դրան նպաստում են մասամբ և ճանճերը։ Վերջինները հաճոյքով նոտում են թքած խորխի վրայ և այդպիսով ցրւում նրա փոքրիկ մասնիկները, որոնք իրենց մէջ կարող են տուբերկուլեօզալին բացիկներ կրել։

Վախկոտ և կասկածոտ մարդիկ, մանաւանդ նրանք, որոնք հսկում են թոքախտաւորներին, կարող են հանդիսանալ նրանով, որ թոքախտաւորների հետ շփւելը ինքնըստիքեան վտանգաւոր չէ։ Բայց այդ գառնում է վտանգաւոր, եթե հիւանդը իրեն գգոլչ չէ պահում, մանաւանդ իւր խորխի նկատմամբ։ Եւ իսկապէս թոքախտաւորների սենեակներում, որտեղ բոլոր արտադրութիւնները ինչպէս հարկն է ոչնչացնում են, համարեա երբեք չէք գտնի տուբերկուլեօզալին բացիլ, իսկ ուրիշ պայմաններում այդ բացիլները անպայման գոյութիւն ունեն։

Ներկայումս 40 մարդուց մէկն է տուբերկուլեօզով հիւանդ, և այդ հիւանդը շատ հազիւ է պատահում, որ զգոյն լինի իրեն արտադրութիւնների հետ։ Խորխի ամեն մի գնդակը կարող է պարունակել 300,000,000 բացիլ (պրօ-

Փեսոր Heller):

Ալդ պատճառով շատ հասկանալի է, թէ ինչքան մեծ քանակութեամբ են առաջանում նրանք ամեն մի ժամում և չպիտի զարմանալ, որ հիւանդացնող թոյնը գտնուում է ամենուրեք, ուր ապրում են մարդիկ, մանաւանդ այնտեղ, ուր նրանք հաւաքում են մեծ թւով, ինչպէս եկեղեցիներում, ուսումնարաններում, պանդկներում, ակումբներում, մանաւանդ պարերի ժամանակ:

ԿԵՆԴԱՅԻՆԵՐԻ «ՄԱՐԳԱՐՏԱՅԻՆ ԲԻՒԱՅՈՒԹԻՒՆԻ»

«Մարգարտային հիւանդութիւնը» որ տարածւած է մեր տնային կենդանիների մէջ, ներկայացնում է իրենից նոյն տուբերկուլիօզը: Նրա բացիլները ուսուցցների ժահրի հետ հեշտ կերպով տարածւում են ծծերի վրայ և վարակում կաթը:

2 Հիւանդացնող թոյնի տեղափոխումը մարդու վրայ:

Հիւանդացնող թոյնը կարող է ընկնել մեր օրգանիզմը հետեւալ ճանապարհներով՝

- 1) Շնչառութեան միջոցով,
- 2) Առմիջական վարակումով,
- 3) Կերակրի միջոցով:

Օ դ լ

Հիւանդացնող սաղմերը ամենից յաճախ անցնում են մարդուն տին օդով, որը նա ներս է շնչում: Հենց ալդ պատճառով է, որ աւելի շուտ հիւանդացնում են շնչառու-

թեան օրգանները: Ինչպէս արդէն ասացինք, տուբերկուլեզային բացիլները վոշու փոքրիկ մասնիկների հետ անցնում են օդի մէջ, որը վակւած բնակարաններում երբեք ազատ չի լինում նրանցից: Արևի ճառագալթում, որը թափանցում է մուլթ սենեակի մէջ որև է ճեղքւածքով, մենք միշտ տեսնում ենք օդի մէջ լողացող անթիւ քանակութեամբ փոշիների:

Բացի օդում՝ հիւանդութեան սաղմերը ցրւում են ամեն կողմ, վերին աստիճանի նօրանում են և հետեապէս վտանգաւոր չեն: Տուբերկուլեզը մեր նորագոյն կուլտուրական կեանքի հիւանդութիւն է, մը կեանքի. որ ստիպում է մարդկանց օրւայ մեծ մասը ծածկւած բնակարաններում անցկացնել Քանի դեռ Ամերիկայի Հնդիկները, ինչպէս որսորդական ազգ, չուում էին մի տեղից միւս տեղ, թոքախուը նրանց բոլորովին անլայտ էր, ինչպէս անլայտ է նա մինչև օրս դաշտավայրերի կիրգիզներին և անապատների նօմարդներին: Ամբողջ ժամանակ բաց օդում բնակւելով, նրանք ազատ էին հիւանդութեան սաղմերն ընդունելուց: Բայց հենց որ նրանք իրենց վրանները փոխեցին մշտական բնակարանների և յարաբերութեան մէջ մտան վարակւած օտարերկացիների հետ, տուբերկուլեզը նրանց մէջ սկսեց իր հունձն անել:

ԹՈՅՆԻ անմիջական տարածումը

Հիւանդութեան անմիջական տարածումը առաջ է գալիս ճիշտ այնպէս, ինչպէս առաջւայ ժամանակներում ծաղկի անցնելը մէկից միւսը: Վարակւելու համար գլխաւորապէս հարկաւոր է, որ մարդու մարմնի վրայ վէրք լինի թէկուզ շատ չնչին. այլապէս վարակում չի կարող առաջ դալ,



որովհետեւ թոյնը անվնաս կաշւից անցնել չի կարող: Թոյնը տարածւում է Համբոյի, կծելու և նման հպումների միջոցով: Դէպքեր շատ են եղել, երբ ըստ մահմէդական սովորութեան՝ թոքախտաւոր վիրաբոյթը թլպատման ժամանակ իւր հիւանդութիւնով վարակել է երեխալին:

Տուբերկուլեօգալին այն ուռուցքները, որ տէսնում ենք անգամահատական բաժամունքներում ծառայողների ձեռքերի վրայ, ինչպէս նաև մարդարտաախտ ունեցող կովեր կթողների, լւացարարների և դերձակների մատների վրայ, ցոյց են տալիս, որ աշխատելու ժամանակ թոյնը աննկատելի կերպով մտել է նրանց կաշւի տակ: Անկասկած է նոյնպէս, որ մեծ կապ կայ երեխանների մատները կրծելու և նրանց կաշւի տուբերկուլեօգի մէջ: Այս երեսով նկատւած է ժողովրդի կողմից:

Օլդենբուրգի գքսութեան մէջ այն երեխաններին, ուրոնք քչփորում են իրենց քթերը, նկատում են՝ «Տես, քթիդ մէջ արջ դուրս կգայ», Մենք էլ կարող ենք երեխաններին վախեցնել գալով (գալացաւով):

Կերակրային մթերմներ

Տուբերկուլեօգալին՝ բացիլները ուտեստի մթերքների մէջ մտնում են գլխաւորապէս՝ կաթի միջոցով, որ ստացւում է մարդարտաախտ ունեցող կովերից: Վարակումը մսի միջոցով աւելի հազւագիւտ է և եթէ լինի էլ, այդ կարելի է այն ժամանակ, երբ հիւանդութիւնը շատ է զարդացած և առաջ գնացած: Ըսդհանրապէս՝ կերակրային մթերքներից վարակելու վտանգը մեծ չէ: Ստամոքսալին թթու հիւթը, ազիքների մէջ զարդացող ուրիշ միկրօօրդանիզմների մրցումը ոչնչացնում են տուբերկուլեօգալին այն բացիլները, որոնք

պատահմամբ ընկնում են մարդու ստամոքսի մէջ, Բայց և այնպէս ազիքների տուբերկուլեօգի ժագումը կարելի է բացատրել նրանով, որ գործածւելիք կաթի մէջ կան տուբերկուլեօգալին ձողիկներ: Բացի այդ, այն թոքախտաւորները, որոնք կուլ են տալիս իրենց խորխը, շատ յաճախ հիւանդանում են աղիքների տուբերկուլեօգալին վէրքերով: (Կարդալ պրօֆ. Մեհրաբեանի գիտական աշխատանքը «Աղիքների տուբերկուլեօգը ինչպէս սկզբնական հիւանդութիւն» 1909 թ. տպւած Պետրոգրադում):

3. Տուբերկուլեօգի վարակիչ լինելը.

Հարիւր տարի առաջ ժողովրդի մէջ թոքախտն ընդունւած էր իրեւ վարակիչ հիւանդութիւն: Բայց այն փաստից լետոյ, երբ տեսան, որ հիւանդների հետ շփւելը շատ քիչ դէպքերումն է հիւանդացնում տառաղջներին, եկան այն սխալ եզրակացութեան, թէ թոքախտի տարածման մէջ վարակումը ոչ մի գեր չի խաղում: Բժիշկների մեծամասնութիւնը, իհարկէ, շարունակում էր կռիւ մզել այդ սընալի գէմ: Բայց և այնպէս շատ յաճախ նկատւում էր, թէ ինչպէս թոքախտաւոր ամուսինը վարակում էր իւր կնոջ, իսկ թոքախտով հիւանդը՝ իրեն խնամող մարդուն:

Մերանում սպասուհիները, որ խնամում էին եկտոր հիւանդներին, առաջներում շատ շուտ էին մեռնում թոքախտից, չնայած: որ նրանց ընտրում էին առողջ և ուժեղ ծիրութեան ընտանիքներից (Pirchler): Նոյնը հաստատեց պրօֆ. Ziemssen-ը Բաւարիայի գթութեան քոլերի վերաբերմամբ:

Թոքախտի վարակչութիւնը հաստատում է և փորձը ընդհանրապէս ամեն մի կենդանի տրամադրւած տուբեր-

կուլեօղին, վերջ ի վերջով վարակւում է, եթէ նա ստիպւած լինի երկար ժամանակ ներշնչել թոքախտաւորներից առաջացած փոշիացած գոլորշիացումները։ Հազւագիւտ չեն այնպիսի դէպքեր, երբ երիտասարդ բժիշկները և լաբօրատորային ծառայողները զոհ են գնացել սրան։ Այս բոլոր փաստերը աշքի առաջ ունենալով՝ անհրաժեշտ է ընդունել, որ տուբերկուլեօղը վարակիչ է և հիւանդից առողջին անցնելը միանգամայն ապացուցւած։ Ներկայումս համարեա բոլորի կողմից ընդունւած է իրրեւ ճշտութիւն՝ Koch-ի և ուրիշ հետախոյզների հետեւեալ դրութիւնը։ Վարակումը առաջ է գալիս այն տեղից, որտեղ կան տուբերկուլեօղային բացիներ։ այդտեղից արդէն վարակւում է ամբողջ մարմինը և զարգացնում տուբերկուլեօղը։

111

ՕՐԳԱՆԻԶՄԻ ՏԻԱՄԱԳԻՈՒԹԻՒՆԸ ՏՈՒԲԵՐԿՈՒԼԵՅՑԻՆ

1. Բացիլների օրդանիկմի մէջ մտնելը նրան միշտ
չի վարակում։

Ինչպէս արդէն ասացինք, տուբերկուլեօղը ամենատարածւած հիւանդութիւններից մէկն է։ Հիւանդների գանագան օրգաններով դուրս է շպրտում բացիների չահագին քանակութիւն։ Վերջապէս տուբերկուլեօղը անպարման վարակող է։ Եւ եթէ այդ այդպէս է, բնականաբար ծագում են նոր հարցեր։ ինչու ուրեմն մարդիկ աւելի մեծ թւով չեն հիւանդանում, երբ նրանց մեծամասնութիւնը այդպէս լաճախակի ենթարկւած է վարակման վտանգին։ Ինչու բժիշկները, գիտութեան քոլորերը և ալլն և ալլն, գտնւելով

միշտ թոքախտաւորների հետ յարաբերութեան մէջ, չեն հիւանդանում աւելի շատ, աւելի յաճախ։

Առաջին հայեացքից այս հարցերին պատասխանելը կարծես թէ շատ գժւար է։ Սակայն հետեւեալ օրինակը կարող է պարզնի գործի էութիւնը և ցոյզ տալ միայն վարակման նշանակութիւնը, այսինքն թէ ինչպէս է թոյնը մըտնում օրգանիզմի մէջ։ Համեմատենք տուբերկուլեօղային բացիլը որ և է բոլոսի սերմի հետ, չէ որ նա իրենից ստոր բուսական օրգանիզմ է ներկայացնում։ Չոր աւազոտ հողի վրայ սերմ չի կարող բուսնել. դրա համար հարկաւոր է լաւ և պարարտ հող։ Այդ գեռ բաւական չէ, եթէ սերմը գցենք ձմրան ժամանակ, ամենալաւ հողն անդամ անընդունակ կըլինի սերմն աճեցնել։ Այդ պատճառով է որ գիւղացին պարարտացնում և մշակում է հողը, որպէսզի սերմից առաջացող բոլոսը գտնի իւր համար թէ ջերմութիւն և թէ կերպկուր։

Գիւղացին տարւալ հարկաւոր ժամանակին է հերկում և սերմում և խնամք է տանում, որ սերմերը ծածկւած լինեն բարենպաստ հողով։ Նոյնը պէտք է ասել և տուբերկուլեօղի վերաբերութեամբ։ Ինչպէս որ սերմը չի զարգանայ աւազի վրայ, նոյնպէս և տուբերկուլեօղը չի կարող զարգանալ միմիայն թունի օրգանիզմի մէջ մտնելով։ Դըա համար հարկաւոր է որ մարդու մարմնի մէջ այդ թոյնը գտնի որոշ տեղ, ուր պայմանները նրան չխանգարեն մնալ միշտ, զարգանալ և տարածել ամենուրեք։ Թէ ինչպէս և ինչ պայմանների մէջ են տուբերկուլեօղային բացիլներո գտնում այդ տեղը, ուր պայմանների կամ այն ժամանակ, երբ մենք ընդարձակորէն կուսումնատիրենք թէ վարակման ճանապարհուրը և թէ այն իունդուները, որ առաջ է գնում օրգանիզմը բացիլների գէմ։

Օրգանիզմի բնական էլ պատճենողական ոյժերը

Մարդու շնչառական ուղիների մէջ ներշնչող օդի մի-
ջոցով մտնում են փոշու մասնիկներ, նրանց հետ միասին
և հիւանդութեան սաղմերը, Այդ փոշու մեծ մասը պահ-
ւում է քթի փոսիկների թաղանթով, որի միջով անցնում
է ներշնչող օդը, յետոյ կորչում է խնչելու ժամանակ:
Քթի շանակութիւնը, որպէս փոշու ֆիլտր, շատ մեծ է,
բայց և այնպէս փոշու ամենափոքրիկ մասնիկները թափա-
ցում են շնչառական օրգանների խորքերը, Բայց միկրօր-
գանիզմների համար առողջ թաղանթը ներկայանում է որ-
պէս անլաղթ խոչնդոտ. նրանք պահւում են մաղասովբլղա-
մով և՝ շնորհիւ շնչափողերի ներքին երեսը ծածկող վերին
աստիճանի բարակ մազերի շարժումներին՝ անընդհատ
վեր են բարձրանում ու անհետանում հազարու ժա-
մանակ: Իսկ եթէ մաղասալին թաղանթը՝ օրգանիզմի այդ
խսկական պաշտպանը, վնասւած է, այն ժամանակ գռներ
են բացւում հիւանդութեան սաղմերի թափանցելու
համար:

Սակայն այս գեռ բոլորը չեն. արեան և մարմնի
հիւսւածքների աղիւսակներն եւ ներկայանում են որպէս
վերջին պաշտպանողական գիծ, որի առաջ միկրօօրգանիզմ-
ները մեռնում կամ անվնաս են դառնում: Կուփի մէջ ոյժը
միայն ալդ գէացումն է անցնում հիւսանդութեան կողմը,
երբ թուլանում են օրգանիզմի բնական պաշտպանողական
ոյժերը, մի բան որ կարող է կախուած լինել ընդհանուր
թուլութիւնից, արեան պակասութիւնից և ուրիշ շատ վը-
նասակար ազգեցութիւններից: Ի հարկէ, բացիները աւելի
շատ են լաղթում, եթէ նրանք գալիս են նորանոր ոյժե-
րով և այն ել մեծ քանակութեամբ: Ընդմիշտ տեղաւորւե-
լով օրգանիզմի մէջ, նրանք շատ շուտ են բազմանում և
թոքերի հիւսւածքների վրայ առաջ են բերում խորը
աւելումներ:

Տուրեկալեօղին տամադրւած լինելը

Ալդպիսով մենք տեսնում ենք, որ առւբերկութեզի
ծագման համար, բայց հիւանդութեան գրգռիչ պատճառ-
ներից, անհրաժեշտ է նաև օրգանիզմի օրոշ կազմը, մի
բան, որ նպաստում է հիւանդութեան ընդունելութեան և
նրա զարգացման։ Օրգանիզմի այդ առանձին գրութիւնը
մենք անւանում ենք առւբերկութեզը ընդունելու «արա-
մագրութիւն»։ Իսկ կարող է լինել ժառանգական և մի
շարք աննպաստ պայմաններ կարող են առաջացնել տրամա-
դրութիւն դէպի թռքախտը։

Ալդ դրութիւնը գտնւում է մեր օրգանիզմի կամ ներքին կամ արտաքին սլայմանների ազդեցութեան տակ:

2. Տուբերկուլոզի ժառանգականութիւնը

Ամենօրեալ փորձը ցոյց է տալիս, որ թռքախտը երեւան դալով որևէ ընտանիքում, սովորաբար անցնում է ժառանգներին, թէպէտ և այս պարագայում երբեմն ինալուում են ամբողջ սերունդները: Ամուսնութեան միջոցով հեւանդների հետ թռքախտը կարող է անցնել մինչև այդ առողջ ցեղին: Ժառանգականութեան նշանակութիւնը անվիճելի է, սակայն մեծ մասամբ նրան հասկանում են բոլորովին սխալ: Տուքերկուլեօզը շատ հազիւ է անցնում երեխային ծնւելու հետ: Ալդպիսի դէպքեր նկատւում են միայն այն ժամանակ, երբ մօր հիւանդութիւնը արդէն շատ է առաջ գնացել:

Սլյպիսի գէպքերում երեխա աները մեռնում են շատ շուտ։ Իսկ առհասարակ ժառանգականութեան մէջ ոչ թէ հիւանդութիւնն է անցնում, այլ գէպի հիւանդութիւն տը-

բամադրւած լինելը, որը և աարտայայտւում է թուլութիւնով և շնչառական օրգանների քիչ զարգացումով:

Habitus

Թոքախտաւորների ժառանգները հենց իրենց արտաքինով շատ բնորոշ պատկեր են ներկայացնում, որին մենք բժիշկներս տուբերկուլեօզալին *habitus* անունն ենք տալիս: Արա յատկանիշներն են՝ երկար, վերեկ մասում բարակող, կրծքի վանդակը, որի կողերի մէջ նկատում են լալն տարածութիւններ, թևաձև տարածւող թիկունքները, տափակ և շնչառութեան ժամանակ քիչ շարժւող կուրծքը, այնուհետև վերին աստիճանի սպրդնած և փափռուկ կաշին, ծալրերը հաստացած, նոր վերջանում են շատ ծուռ եղունգներով, լոդերի գոյնն էլ դալկակապոլտ:

Պարզ է որ այսպիսի կազմի տէր մարդիկ յաճախ գոհ են գնում թոքախտին: Սակայն շատերը ազատւում են, եթէ իրենց հեռու են պահում վարակումից և առհասարակ հսկում են իրենց առողջութեան վրայ:

Առհասարակ պիտի ասել, որ այն երեխաները, որոնց ծնողները լրացման ժամանակ տառապելիս են եղել մաշող հիւանդութիւններով (բակ, սիֆիլիս, արբեցողութիւն ևայլն), շատ քիչ են ընդունակ դիմադրելու տուբերկուլեօզին: Դժւար է ասել, թէ ամեն առանձին դէպքում ինչը պիտի վերագրել ժառանգականութեան և ինչը վարակման: Այսպէս՝ եթէ մի ընտանիքում, որտեղ ծնողները հիւանդ են, թոքախտով հիւանդանում է երեխան, մենք ճիշտ չենք կարող ասել ժառանգական է հիւանդութիւնը, թէ ծնողներից է վարակւել երեխան:

Իալց վերջինն աւնլի հաւանական է: Յամենայն դէպք

թոքախտի տարածման մեղքը չի կարելի միանգամայն ժառանգականութեան վրայ բարդել և աչքաթող անել ուրիշ աւելի կարևոր պատճառները:

3. Ստացական տրամադրութիւնը դէպի հիւանդութիւնը:

Այն ամենը, ինչ որ վնասում է մարդու առողջութեան, միևնուն ժամանակ նպաստում է տուբերկուլեօզի առաջացման: Ասածներս նախ և առաջ վերաբերում են շնչառական օրգաններին: Այն Փակտորները, որոնք թուլացնում են նրանց ընդունակութիւնը հիւանդութեան դիմադրելուն, հետեւհալներն են.—

1) Մրսելը, խիստ քամիները, ցուրտ և խոնաւ օդը, այս ամենը մաղասալին թաղանթները բորբոքման դրութեան են հասցնում և հեշտացնում դրանով հիւանդութեան առաջանալու գործը:

2) Յաճախ և երկար մնալը փշացած մթնոլորդում (տրակտիրներ, նեղ սենեակներ և այլն) նոյնպէս առաջացնում է մաղասալին թաղանթի կատար:

3) Փոշի ներշնչելը: Մանաւանդ վնասակար է այն փոշին, որը բաղկացած է սուրանկիւն մասնիկներից, որովհետեւ նրանք խոցութում են մաղասալին թաղանթը և երկարատև գործողութիւնից զրկում են նրան խաղացող մազերից գոյացած պաշտպանող ծածկոցից:

4) Շնչառական օրգանների և թոքերի ամեն մի բորբոքում: Թոքերի բորբոքումից, պլերիտից, կոկլիւզից, կարմրուկից և հարթուիլից լետոյ տուբերկուլեօզը շատ հեշտ է զարգանում.

5) Կրծքի ազտա և բնական զարգացման դեմ բոլոր խոչընդուները (նեղ կօրսեաները, մարմնի ծուռ գրութիւնը ևայլն) այս բոլորը խանգարում են ազտա զարգացման, արեան առաջ ընթացութեան և թոքերի մաքրւելուն։ Բացի այդ, օրգանիզմը թուլացնող բոլոր հիւանդութիւնները (շնորհիւ ջերմի, արեան կորստի) նոյնպէս թուլացնում են տուբերկուլեօզային բացիւների հետ կռւելու ընդունակութիւնը։

Ալիօնօլիզմ (արբեցողութիւն)

Ալկոհօլիզմը տուբերկուլեօզի տարածման գործում ներկայանում է որպէս ջերմ գործակից։ Փրանսիական բըժիշկները պնդում են, որ բոլոր թոքախտաւորների 90% առաջներում եղել են արբեցողներ։ Հներում նօրմանգիտայի և Բրիտանիայի ընտանիքները պահծ ենում էին իրենց առողջութիւնով և առատ սերնդատւութեամբ։ Բայց այն օքից, երբ նրանց մէջ տարածւեց արբեցողութիւնը, նու իր հետ բերեց և թոքախտը, այն էլ ամենավնասակար տեսակը։

Սա մի ահարկու նախազգուշացում է, որի վրայ ամենքըն իրենց ուշադրութիւնը պիտի դարձնեն:

Յամենայն գէպս, եթէ կալ որոշ տրամադրութիւն գէպի թռքախտը, ոչինչ այնքան չի սաստկացնում նրան, ինչքան ալկօհօլիզմը։ Որբեցողը ոչ միայն իրեն առողջութեանն է վնասում, այլև նա վտանգաւոր է իրեն շրջապատողների համար, որովհետեւ արբած գրութեան մէջ ոչ մի զգուշութիւն գործ չի դնում (օր. Հագալու, Խորխը թքելու ժամանակ)։

4. Պրօֆէսուսինը, որ առջիս է տուրերկուլեզը
որոշ պրօֆէսիայով՝ պարապող մարդկանց, վաղաց է լալ-
նի և հաստատած մւանչաններով:

Հողագործութիւն եւ արդինաբերութիւն

Սակառնիալում տուբերկուլեզով հիւանդացողներն
ստանում էին կենսաթոշակ՝
10,000 ապահովագրւած երկրագործներից . . . 77 մարդ

Արևելքան և արևմտեան Պրուսիայում, որտեղ ազգա-
բնակութիւնը գլխաւորապէս պարապում է երկրագործու-
թեամբ, 10,000 մարդկանց մէջ թոքախտով հիւանդացող-
ները կազմում են 14, 1—14, 3: Բէյնի և Վեստֆալիայի
շրջաններում նրանց թիւը բարձրանում է մինչև 28,0—
30,1. Զինսորների մէջ, որոնք ռազմական պաշտօն են վա-
րում, հիւանդացողների թիւը աւելի քիչ է քան արհես-
տաւորների մէջ: Վեճակագրութիւնը հաստատում է փոշու-
նշանակութիւնը տուբերկուլիոզի տարածման մէջ: Այն
բանութիւնը մէջ, որոնք պարապում են փոշու հետ կապ-
չունեցող դորժու՝ մեռնազների թիւը հետևեալ ձեռք է որ-
տալալուում 2,39: 1000: Հակառակ դէպքում մեռնթղների
թիւը բարձրանում է մինչև 5,42: 1000: Մանաւանդ վնա-
սակար են հետևեալ պարապմունքները:

- 1) Որոնք պահանջում են նիւթի վերամշակում. այդ նիւթը պարունակում է հիւանդացնող սազմեր (հնածախ-սեր, լւացարարներ, դեղձակներ, հիւանդապահներ):
 - 2) Այն պարագմունքները, որոնց ժամանակ փոշի ներ-

շնչելը անխուսափելի է լինում: Ամենից վատ է մետաղի փոշին (պղնձագործները, երկաթագործները): Զօլինդենում լլկողները 40 տարեկան հասակից վեր՝ համարեա կիսով չափ թռքախտից են մեռնում: Նոյնն է նաև քարտաշների, քանդակագործների և լախճապակեալ գործի բանւորների վերաբերեալ, բոլորն էլ ստիպւած են հանքալին փոշի ներշնչել: Վերջապէս օրգանական փոշին սոսկալի թռերով մեռնողներ է առաջ բերում ծխախոտային, թղթի, բրդի և նոյնանման գործարանների բանւորների մէջ:

3) Ալնպիսի պարապմունքներ, որտեղ պարապելու ժամանակ մարմսի գիրքը թոյլ չի տալիս թոքերին ազատ և կանոնաւոր լայնանալ շնչառութեան ժամանակ (գրագիրներ, կօշկակարներ, ատաղձագործներ և ալլն):

4) Ալնպիսի պարապմունքներ, որոնք մեծ մասամբ պահանջում են անկանոն և անսօրմալ կեանք (սպասաւորներ, տրակտիրների տէրեր):

Այս պարապմունքների մեծամասնութեան հետ կապւած են նաև ուրիշ վնասակար ազդեցութիւններ (փոշուներշնչելը, նստակեաց կեանքը, ալկօհօլի ՚ի չարը գործ դնելը): Տարաբախտաբար մարդիկ մասամբ տգիտութեամբ, մասամբ աններելի թեթեամտութեամբ նպաստում են հիւանդացնող սաղմեր ընդունելուն և առողջութեանը վնասակար կենցաղով՝ ստեղծում են թռքախտի զարգացման համար բարենպաստ պայմաններ: Ախտը վերջապէս դառնում է մի չարիք, երբ, ինչպէս ալդ լինում է արագ աճող քաղաքներում, ազգաբնակութեան խաւերի դիմադրական ոյժերը թռւլանում են լորի և օդի պակասութեան, բնակարանների կեղտոտութեան ու նեղութեան, վատ կերակրւելու և զանազան անչափաւորութիւնների պատճառով:

ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ԳՐԳՈՒԶ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԵՒ ՎԱ-
ՐԱԿՄԱՆ ՎՏԱՆԿԻ ԴԵՄ ՄՂԻՈՂ ԿՐԻՒԸ

Այն հին սկզբունքը՝ թէ ռաւելի հեշտ է հիւանդութեան առաջն առնել, քան նրա բժշկելու, ճշմարիտ է տռւբերկուլեօզի վերաբերմամբ, Ալդ պատճառով ամենից առաջ պիտի ուշադրութիւն դարձնել ոչնչացնելու ալն ամենը, ինչ որ կարող է նպաստել վարակման, իսկ դրա համար հարկաւոր է ոչնչացնել հիւանդութեան գրգուչ պատճառները: Քանի ալդ պատճառները քիչ լինեն, ալնքան էլ քիչ կլինի վարակման վտանգը:

Բայց ինչ միջոցով մենք կարող ենք ոչնչացնել տռւբերկուլեօզալին բացիլները: Նրանք շատ կենսունակ են. մինչև անգամ ամբողջ շաբաթներ, նոյնիսկ ամիսներ օրգանիզմից դուրս պահպանում են իրենց կենսունականութիւնը, նայած թէ ինչ դրութեան մէջ են գտնւում նրանք, չոր թէ թաց: Երկար ժամանակ նրանք կարողանում են տանել զրոյից ցած ջերմութիւն:

Տուբերկուլեօզային բացիլների ոչնչացումը բարձր ջերմութեան միջոցով

Թաց միջավալը տաքացնելով (օր. եռացնելու ժամանակ) տռւբերկուլեօզալին բացիլները $5-10$ ըոպէում մեռնում են: Բայց չոր տաքութիւնը (մինչև անգամ եթէ գահանի $140^{\circ}-160^{\circ}$) բացիլները երկար ժամանակ կարող են տանել, $50^{\circ}-60^{\circ}$ տաքութիւնը, որ նկատում է արևի կիրակի ճառագայթների տակ, բաւականաչափ նսեմացնում է

Նրանց վնասակարութիւնը և կենսունակութիւնը:

Քիմիական նիւթեր, որոնք սպանում են տուբերկուլիզո-
գային բացիլները

Մի քանի քիմիական նիւթեր, ինչպէս սուլէմայի
1: 1000 խառնուրդը, կարբօլեան թթուի 50: 1000, լիզոլայի,
100: 1000 թէպէտ շատ շուշ են սպանում սաղմերը,
բայց ամենուրեք գործածելու համար շատ թունաւոր են:
Այդ միջոցներն են, որ պիտի գործածւեն այնտեղ, որտեղ են-
թադրւած է միկրօսորդանիզմների ներկայութիւնը: Բայց տա-
րաբախտաբար բացիլների դէմ կռւելու համար մենք չենք
կարող օգտուել այդ նիւթերից հիւանդութեան սկզբնական
վայրում, այսինքն հիւանդի օրգանիզմում, որովհետեւ վեր-
ջինը անկարող է առնել այդ թոյնը: Նոյնը պէտք է առել
և բարձր տատիճանի տաքութեան վերաբերմամբ, որ ան-
հրաժեշտ է բացիլների սպանելու համար:

Հիւանդների արտաքորութիւնների վարակման դէմ կռւե-
լու նպատակայարմարութիւնը

Եթէ ներկայումս մենք անկարող ենք թոքերի կամ
միւս օրգանների մէջ գտնւող բացիլները ոչնչացնել, փո-
խարէնը մենք ունենք հնարաւորութիւն նրանց առաջն
առնել մի օրգանիզմից միւսը անցնելու ժամանակ: Տուքեր-
կուլէօզի տարածման դէմ կռւելու համար գլխաւոր ուշա-
դրութիւնը պիտի դարձնել հիւանդների տրտաժորութիւն-
ների ախտահանութեան վրայ, մանաւանդ խորխի վրայ:

Այն օրից, երբ Պրուսիայում այդ միջոցը գործադրուում
է լայն չափով, թոքախտից մեռնողների թիւը լինկել է՝

31,1 — 10,000-ից 1889 թւին

մինչև 21,8 — 10,000-ից 1897 թւին:

Բաւարիայում և Աւստրիայում, ուր ոչ մի նախազգու-
շացման միջոցներ ձեռք չէին առնւում, թւերի ալդպիսի
պակասում չի նկատում: Իսկապէս, մենք ունենք հետե-
ւեալ թւերը.

Բաւարիայում՝ 1889 թ. — 33,4. 1897 թ. — 30,0 : 10,000
Աւստրիայում՝ 1881 թ. — 38,5 1894 թ. — 37,3 : 10,000.

Խորխի պատճանելը փոչիանալուց

Ի՞նչպէս անվնաս դարձնել թոքախտաւորի խորխը:
Մեզ յայտնի է, որ նա վտանգաւոր է դառնում այն ժա-
մանակ, երբ չորանում է ու փոշիանում: Այդ վտանգը կա-
րելի է հեռացնել շատ հասարակ կերպով բոլոր բնակարան-
ներում, մանաւանդ այնտեղ, ուր յաճախում են մեծ քա-
նակութեամբ մարդկի, ինչպէս ուսումնարաններում, եկե-
ղեցիներում, ըէստորաններում և այլն, պիտի գրւած լինեն
թքամաններ, որոնց մի երրորդականը պիտի լցւած լինի
ջրով:

Ցատակի վրայ թքելու տգեղ և վտանգաւոր սովորու-
թիւնը պէտք է վերացնել

Ամերիկայում ամեն մի թքելուն մի գոլար տուգանք
է տրւում: Ոչ մի պատւաւոր մարդ՝ ի յարգանս իրեն շըր-
ջապատողների՝ իրեն թոյլ չի տալ ալդպիսի բան: Ուսում-
նարաններում և ընտանիքներում երեխաններին այդ ուղ-
ղութեամբ պիտի կրմել: Թոքախտաւորը, եթէ թքում է
ամեն պատհած տեղ, գրանով վնասում է ոչ միայն իրեն,

Ճրջապատողներին, այլև իր սեփական առողջութեան։ Դրանով նա կարող է յետ ներշնչել արտաքսած բացիլները և վարակել իր թոքերի առողջ մասերը։

Թբամաններ

Որպէս թքսմաններ, աւելի լաւ են ֆարֆօրալին տափակ ամանները, կարելի է և գործածել ծաղկամանների տակեր։ Թքամանները միշտ պէտք է ունենան իրենց մէջ ջուր, որը պիտի թափել ամեն օր կամ կրակի կամ արտաքնօցի մէջ։ Ողողելով ամանը տաք ջրով, նրա մէջ պէտք է ածել նոր ջուր։ Ծունը հաւաքող սպասաւորը այդ գործից յետոյ իւր ձեռքերը պիտի լւանալ սապնով։ Թաշկինակները, երբէք չպիտի ծառայեն խորխ կամ թուք մաքրելու համար, որովհետև վերջիններն աւելի շուշ են չորանում և հիւան դութեան սաղմերը անցնում են օդի մէջ։

Մեծ և գոյնզգոյն թաշկինակները վատ են ընդհանուր մաքրութեան տեսակէտից։ Բաց օդում խորխն այնքան վտանգաւոր չէ։ Այդ գէպքում հիւանդութեան սաղմերը խկոյն ցրում են ահագին տարածութեան մէջ։

Ինչ պիտի անել այն առարկանները, որոնց գործածել են թոքախտաւորները

Կասկածաւոր տեղաշորային պիտոյքների հետ շատ զգուշ պիտի լինել։ Այդ բոլոր իրերը կարելի է ուրիշին տալ միայն լաւ մաքրելուց յետոյ։ Նախ և առաջ փախստքները չպիտի բացօդեալ մնան։ պէտք է պահել առանձին պահարանում, որը պիտի յաճախ լւանալ տաք ջրով և սապնով։

Արհրաժեշտ է միշտ զգուշացնել լւացարարներին, դերձակներին։ արհեստաւորներին, երբ նրանք որևէ է գործ են ստանում թոքախտաւորներից։

Կասկածաւոր բնակարանները կարելի է բռնել միայն լաւ մաքրելուց յետոյ։ Հենց միայն այս պատճառով ցանկալի կլինէր տուբերկուլոզի յայտնելու դէպքում տեղեկացնել, ուր հարկն է։ այն ժամանակ ամեն մէկս կիմանալինք, թէ որտեղ մեզ պիտի զգոյշ պահենք։

Առարկանների եւ բնակարանների ախտանիւթիւնը

Շորերը և տեղաշորի պիտոյքները ախտահանութեան պիտի ենթարկել այսպէս կոչւած՝ «ախտահանական կամէրներում», ուրոնք այժմ կան համարեա բոլոր մեծ քաղաքներում։

Այդ բանի համար կան մարդկանց շտատներ, որոնք պարապում են բացառապէս բնակարանների ախտահանութեամբ։ Նման հիմնարկութիւններ հարկաւոր է հաստատել նաև փաքրիկ քաղաքներում։ Սակայն նրանից օգտւելը թանգ չպէտք է լինի, որովհետև դա արգելք կլինէր նրանց ժողովրդականացման։

Մաքրութիւն

Սակայն հասարակ միջոցներով էլ կարելի է շատ բաների հասնել։ Լւանալու առարկանները մաքրում են երկար եփելուց։ Փայտեալ կարասիները, յատակները, իւղաներկ պատերը պէտք է մաքրել տաք ջրով և սապնով, պաստառները հացի փշրանքներով, իսկ անարժէք իրերը պէտք է վառել, թաշկեալ կարասիները, գորգերը, վարա-

գոյրները, մահճակալները և այլ ուրիշ առարկաներ կարող են ախտահանւել չոր տաքութիւնով: Բայց սաղմերից մաքըլուն ամենից լաւ օգնում է իրերի լաւ ծեծւելը, բաց օդում քամու տալը:

Առհասարակ պէտք է առել, որ ջուրը, թարմ օդը և լոյսը տուրերկուլեօզալին բացիլների ոխերիմ թշնամիներն են, և ժողովրդին մաքրապահութեսն սովորցնելը յառաջադիմական մի մեծ քայլ է: Անգլիայում մեծ օգուտ բերին բնակարանների ազատ տեսուշները։ Նրանք հսկում էին ազգաբնակութեան ազքատ դասակարգերի բնակարանների վրա և տալիս էին անհրաժեշտ ցուցմունքներ։

Վարձւած բնակարանները, սնջարանները անհրաժեշտ է ամեն օր մաքրել, իսկ շաբաթը մէկ անգամ լւանալ: Թողը, որ պատում է բնակարանի ամբողջ կարասիները, հարկաւոր է մաքրել ամեն օր թաց շորով:

Տարեկան մի քանի անգամ հարկաւոր է արեփ տակ հանել և մաքրել կարասիները և մահճակալները:

Անմիջական վարակման դէմ մաքառելու
միջոցներ։

Թոքախտաւորների հետ յարաբերութիւն ունենալը

Թոքախտաւորների հետ յարաբերութիւն պահելն անվտանգ է, եթէ հիւանդը ենթարկուամ է որոշ պահանջների և սահմանափակումների։ Նա չպիտի շոյի և համբուրի ուրիշներին։ Հազարու, լորանջելու և ծիծաղելու ժամանակ նա, ինչպէս և ամեն մի բարեկիրթ մարդ, բերանը պիտի թաշկինակով կամ ձեռքով ծածկի, որպէսզի ուրիշների վրա չընկնեն նրա թուքի մասնիկները։ Ծնողները, ծըծ-

մայրերը և դայեակները պիտի զգոյշ լինեն հիւանդ երեխաների հետ։

Թոքախտաւորները ուրիշների հետ միասին միևնուն առարկաներից չպիտի օգտւեն, մանաւանդ մահճակալներից։ Այսեղ պիտի լիշել ճաշի սպասքը, գրչակոթերը (ոմանք նըանց կրծուում են), գրադարանների գրքերը։

Փոքը երեխաներին չպիտի թոյլ տալ ամբողջ ժամանակը յատակի վրա չորեքթաժ տալ և բերան վերցնել ամեն ինչ։ Նրանց եղունգները պիտի կտրել և ձեռքերը պահել մաքրութան մէջ, Կարմըռուկից, Կոկլիւշից, պլերիտից և թոքերի բորբոքումից առողջացողներին թոքախտաւորներից հեռու պիտի պահել։ Ոչ միայն իրեն, այլև շրջապատողների շահերի տեսակէտից թոքախտաւորը պիտի առանձին ուշագրութիւն դարձնի մարմնի, շորերի և բնակարանի մաքրութեան վրայ։ Եղունգները, գլխի մազերը, միրուքը և բնիսելը պիտի կտրւած լինեն։

Կերակրի մթերքների միջոցով վարակւելու դէմ միջոցներ

Կաթնատների տէրերը և առհասարակ անասուններով սրդիւնաբերողները պիտի խնամք տանեն արմատախիլ անել մարդարտափին ախտը։ Դրա համար նրանք իրենց անասունները պիտի արածեցնեն ըստ կարեւոյն բաց օղում, պատրաստեն լայն և արձակ գոմեր և՝ օր գլխաւորն է՝ հիւանդ անասուններին առանձնացնեն։ Ցանկալի են պարբերական անասունաբուժական ոլցելութիւնները։

Սպանդանոցի և մս և վաճառների գործունէութեան կանոնաւորումը օրէնքի կողմից, պատական կոնտրոլը այն հիմնարկութիւնների վրա, ուսոնք պարապում են կաթնատնտեսութեամբ և պանրագործութեամբ, կարող կլինէին

Հանգստացնել ամենակասկածոտ մարդկանց, Բայց մեզանից ամեն մէկը կարող է իրեն այդպիսի վարակումից հեռու պահել, եթէ չխմի հում կաթ և չուտի հում կամ կիսահում միտ:

ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԻԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԴԷՄ ՄԻՋՈՑՆԵՐ

Եատ երկար ժամանակ մեր նպատակը պիտի լինի հիւանդութեան սազմերի կատարեալ ոչնչացումը, իսկ մինչեւ նրան հասնելը դեռ շատ ժամանակ կանցնի: Չնայած թրքամանների գործածութեան, մենք դեռ երկար ժամանակ բաւականաշափ կը լեզնէնք տուբերկուլեօզալին բացիլներ:

Ընդհանուր հսկողութիւն առողջութեան վրայ

Այս հիման վրայ հարկաւոր է ձգտել մարդու օրգանիզմի դիմադրական ոյժի հարստացման և առողջութեան:

Բժիշկները միշտ պիտի սովորցնեն, թէ ինչ միջոցով կարելի է դրան հասնել, իսկ ժողովուրդը պարտաւոր է լրջօրէն հետևել նրանց ցուցմունքներին:

Վաղաժամ ամուսնութեան հետեւանիը

Հին գերման ժողովրդի սովորութիւնը՝ հասուն ժամանակ պսակւել՝ որից ծնւռում էին առողջակազմ և ուժեղ երեխաներ, պատմագիր Տացիտոսը ժողովրդական ոյժի անհատ աղբիւր է անւանում: Տալաբախտաբար ալդ ինելոք

սովորութիւնը չէ մնացել մինչև մեր օրերը: Հէնց ամենաաղքատ դասակարգերում, որտեղ վատ կերակրւելու պատճառով պատանեկութեան զարգացումը ուշ է աւարտում, ընդունւած է վաղաժամ ամուսնութիւնը: Մինչդեռ նոյն իսկ ամենաթուլակազմ երիտասարդութիւնը հէնց որ ազատում է զինւորական ծառայութիւնից, միւս՝ աւելի առողջ մասից շուտ է ամուսնուում: Պարզ է, որ բոլորովին չզարգացած և այն էլ թոլլ հայրերից առողջ երեխաներ չի կարելի սպասել, մանաւանդ՝ եթէ ընտանիքը, ինչպէս յաճախ պատոհում է, նիւթապէս վատ է ապահովւած: Առհասարակ տղամարդիկ 28 տարուց առաջ չպիտի պսակւեն, իսկ կանայք 20 տարուց:

Պսակը ազգականների մէջ

Հայ լուսաւորչական և յունադաւան եկեղեցիների արօգելքը՝ պսակւել ազգականների հետ՝ մի լաւ միջոց է պահպանելու ժողովրդական առողջութիւնը: Մի քանի ժեղեր, ինչպէս, Օլգէնբուրգի Միւնստերլանդի Վուրստենում, որտեղ բացառապէս կաթոլիկներ են ապրում, թոքախտի չափազանց տարածւելը մասամբ կարելի է վերագրել և նրան, որ գիւղացիները հարիւրառը տարիների ընթացքում ամուսնութիւնը սոհմանափակել են իրենց մէջ, որով և անհնարին է եղել նոր արեան մուտքը:

Թոքախտսաւորները կարո՞ղ են ամուսնանալ

Ամերիկայում աշխատում են ամուսնանալու հարցը կապել առողջութեան համար տւած վկայականի հետ: Յա-

մենայն դէպս, աչքի առաջ ունենալով ժառանգականութեան նշանակութիւնը, հարկաւոր է տնային բժշկի խորհուրդը հարցնել և տալ նրան վճռական նշանակութիւնն եթէ որևէ կողմից հիւանդութիւնը պարզ կերպով որոշած է, այն ժամանակ ժառանգութեան զահերի տեսակետից հարկաւոր է արգելել պսակը, մանաւանդ՝ եթէ վարակւած է կինը (ստեղծագործող կողմը): Խոկ եթէ հիւանդ են և փեսացուն և հարսնացուն, այն ժամանակ, ինչպէս փորձը ցոյց է տուել, երեխաները շատ շուտ են մեռնում թոքախտից: Բայի այդ, հիւանդներին հարկաւոր է բացատրել, որ հիւանդութեան պրօցէսսի վրայ ամուսնութիւնը վատ աղդեցութիւն է ունենում: Կինը այդ պարագայում աւելի մեծ վտանգի է ենթարկում: Եւ սակայն մինչեւ օրս գոյութիւն ունի այն նախապաշարմունքը, թէ ամուսնութիւնը պահպանում է հիւանդանալուց այն երիտասարդ աղջկանց, որոնք տրամադրուած են տուբերկուլեօզի: Ընդհակառակը: Ծննդաբերութիւնը, կրծքով կերակրելը և ընտանեկան լուգումները — ալս բոլորը այնպիսի պայմաններ են, որոնք հեշտ նպաստում են տուբերկուլեօզի ծագման և նրա ծանր ընթացքին: Անհրաժեշտ է նախազգուշացնել և առողջ կողմը: Նատ անդամ են բժիշկները նկատել, թէ ինչպէս հիւանդ ամուսինը վարակել է իւր մինչեւ այդ առօղջ կնոջ, և ընդհակառակը:

Տուբերկուլեօզի ծագման նպաստող պահանջերի հեռացումը

Քանի մարդ խիստ է հետեւում առողջապահական կանոններին և քանի աւելի է սւջադրութիւն դարձնում ամեն տեսակ աւելորդութիւններից խուսափելուն, այնքան

նա քիչ է ենթարկում թոքախտով հիւանդանալու վտանգին: Սակայն այս դէպքում մեր ժողովրդի սովորութիւնները և բարքերը կարօտ են հիմնական բարեփոխութեան:

Կերակրւելը

Մարդուս օրգանիզմի առողջութեան և կանոնաւոր զարգացման գլխաւոր պայմանո նպատակալարմար և բաւականաչափ կերակրուելն է: Կերակրութիւնը պիտի լինի խառը, ալսինքն կազմւած կանաչեղենի և մրգեղինից՝ աւելացրած համապատասխան քանակութեամբ միս: Տարարախտաբար մեր տանտիկիններից շատ քչերը ճիշտ գաղտփար ունեն, թէ ինչ նշանակութիւն ունի կերակրալին մթերքների կանոնաւոր գործ ածելր: Մայրերը պիտի աշխատեն իրենց աղջկանց կրթել օրպէս խելացի տանտիկիններ: Մի քանի քաղաքներում բացւած տնայնագործական և խոհարական ուսումնարանները միանդամալն համապատասխանում են հասարակական անհրաժեշտ պահանջին:

Ընդհանրապէս առաջ՝ ընդարձակ տեղ պիտի տալ կանաչեղենի գործածութեան:

Մեր գիւղացիները իրանց աղքատութեան պատճառով աննդւում են ոչխելացի կերպով: շատ հազիւ է պատահում որ նրանք ուտեն և կանաչեղեն և թարմ միս: Գիւղացիները վաղուց են նկատել այն փաստը, որ դանդաղ որոճող ձիերը անհամեմատ աւելի լաւ են օգուտում իրանց կերածից: Նոյնը և մարդիկ: Կերակրութիւնը դանդաղ և լաւ ծամելուց նրանք աւելի մեծ օգուտ են քաղում: Բացի այդ, նըրածնք չեն վախենում կոկորդում ընկնելու կերակրութիւնը և ալդպիսով խուսափում են թոքերի մէջ կողմնակի բան

մտցնելու վտանգից, որ կարող է լուրջ բորբոքման պատճառ լինել:

Բնակարանային հարցը

Գիւղերում և փոքր քաղաքներում թոքախտը անհամեմատ քիչ է նկատում՝ քան մեծ կենտրոններում։ Քանի ւելի շատ լոյս և շատ օդ է ընկնում ամեն մէկիս, այնքան քիչ է հիւանդութեան թիւը։ Այդ պատճառով է, որ բնակարանային հարցն ահագին նշանակութիւն ունի։ Սակայն այս հարցի դրութիւնը գեռ ամեն տեղ շատ վատ է, մանաւանդ մեծ և շուտ զարգացող քաղաքներում։ Այստեղ օդից և լոյսից զրկւած նկուղներում (կամորկա) գտնում ենք իսկական տուբերկուլոզալին բներ։ Անհրաժեշտ է այս հարցի կանոնաւորումը օրէնքի կողմից և միանգամայն անհրաժեշտ նաև վերջ դնել այն նեղութեանը, որ նկատում է, օրինակ, պաշտօնական ապաստարաններում։ Հարկաւոր է եռանդուն կերպով պաշտպանել հասարակական հիմնւող միութիւնների սկզբունքները և խրախուսել հասարակական կապիտալների գործածելը՝ բանւորների համար առողջ բնակուրաններ շինելու։ Մինչև անգամ միջին բուրժուական դասակարգերում շատ քիչ է տարածւած գողտրիկ և առողջ բնակարաններ ունենալու գաղափարը։ Անգլիացին ասելով «իմ տունը, իմ ամրոցն է»՝ ամբողջ ուշադրութիւնը դարձնում է իր օջախի բարեկեցութեան վրայ։ Ահա, ինչու Անգլիան տուբերկուլոզալին ստատիստիկայով ամենանախանձելի դրութեան մէջ է։ Իսկ մեզ մօտ ոչ մի բանի համար փող չեն խնայում, բայց բնագարանը ընտրելու դէպքում նկատում է անխելք տնտեսութիւն։ Բնակարանում նոյն և

առաջ պէտք է բաւականաշափ լոյս և օդ լինի։ Իզուր չէ իտալական առածը՝ ուուր որ չէ նայում արեգակը, այնտեղ երեան է զալիս բժիշկը։ Խոհանոցը և վարձւած բնակարանները պէտք է մէկը միւսից բաժանւած լինեն, իսկ այսպէս կոչւած և ընդունարան սենեակները վաղուց պիտի անհետանալիս։ Անհրաժեշտ է լուրջ ուշադրութիւն դարձնել սենեակները տաքացնելու և նրանց ջերմութեան աստիճանի վրայ, որը R. 14°-ից բարձր չպիտի լինի. օդի աւելորդ չորսութեան դէմ կարելի է կուել, կախելով թաց թաշկրնակներ։ Այս պայմանները բաւականաշափ թեթեւացնում են թօքախտաւորների հազը։ Փօքը իկ երկաթեալ վառարանները չի կարելի օդտակար համարել, որովհետև նրանք կարմրում են և տարածում վնասակար գազեր։ Իացի այդ, նրանց լաճախ գործածելը առաջ է բերում մեծ քանակութեամբ փոշի։ Լաւ տաքացրած վառարանի մօտ կանգնելը աւելի վնասակար է, քան սառը օդում փոքր ինչ մնալը։

Ննջարանները

Քաղաքակրթւած մարդը իւր կեանքի մի երրորդ մասը անց է կացնում սնջարանում. այդ պատճառով նրա համար աւելի սպատակայարմար է մեծ և լուսաւոր սենեակը։ Սակայն մինչև օրս գոյութիւն ունի անխելացի մի սովորութիւն՝ սնջարանի համար ընտրել ամենամռաթ նկուղը։ Ամենից խելացի կլինի ընտրել ամենամեծ լսւաւորւած սենեակը, եթէ մինչև անգամ այն սառը լինի. Մահճակալը պիտի լինի բոլորովին աղատ, ամեն տեսակ վարագոյրներ միանգամայն վնասակար են։ Ամառը մահճակալը հարկաւոր է մօտեցնել պատուհանին։ Հաստ վեր-

մակները վնասակար են, որովհետեւ նրանք մարմնի գուլոշիացումներին արգելք են հանդիսանում և նպաստում են թոքախտաւորների գիշերալին քրտնելուն։ Ուշադրութեամբ պէտք է հետեւ օդի մաքրութեան, բանալով ցերեկը բոլոր պատուհանները։ Մինչև անգամ գիշերը տարւալ լաւ եղանակներին մահճակալից հեռու գտնւող օդանցքը պիտի բաց մնար, ննջարանում աւելորդ կաբասիներ չպիտի լինեն։ Ալդ սենեակում կրկնակի անհրաժեշտ է խիստ և մշտական մաքրութիւն։

Յատակների խոնաւութիւնը

Անգլիայում յատակների խոնաւութեանը մեծ նշանակութիւն են տալիս (Buchanan)։ Ըսդհանուր հաւասար պայմաններում թոքախտը ճահճալին տեղերում աւելի լայն չափերով է տարածւում։ Ներքնայարկերի բնակիչներն աւելի յաճախ են հիւանդանում (այս գէպքում բնակարանի նեղութիւնն էլ սեծ դեք է խաղում)։ Այս պատճառով բնակարաններ լնտրելու ժամանակ գլխաւոր ուշադրութիւնը պիտի դարձան նրա չորութեան վրայ։ Շատ ցանկալի է, որ նրա տակը գետնայարկ լիներ, Խոնաւ պատերը, փտած պաստառները, սունկերով պատած յատակները մը մի պատճառ են ներկայացնում մըսելու համար։

Հագուս

Հագուստը պիտի միշտ բաւականին տաքացնի մարդու մարմինը, բայց միւնոյն ժամանակ նա պէտք է ազատ թողնի մարմնի գոլորշիացումները և շնչառութիւնը։ Այս

պատճառով պիտի խուսափել կօրսեաներից և ըէզինի ծածկոցներից։ Բրդէ գործւածքները սպիտակեղէնի համար անպէտք են, որովհետեւ քրտնքից և լւացքից քրքրում են և կեղտը նրանց վրայ քիչ է նկատւում։ Զեռներն ու ոտները պիտի պահել տաք և չոր։ Եթէ ոտները քրտնում են կամ թրջում, հարկաւոր է օրական երկու անգամ գուլպա փոխել իսկ աւելի լաւ է փոխել իսկոյն և եթ, չէնց որ խոնաւութիւն է զգացւում։ Փլուխը և պարանոցը պիտի ազատ մնան։ Ուտներդ տաք պահիր, գլուխդ սառը, իսկ մարմինդ ազատունը՝ հին, սքանչելի առած է առողջութիւնը պահպանելու համար։ Անհրաժեշտ է սպիտակեղէնը շուտ-շուտ փոխել, թրջւածը անմիջապէս վրայից գցել և առհասարակ ամբողջ հագուստը ուշադրութեամբ մաքրել և յաճախ քամուն տալ։ Ցուրտ եղանակներին և բաց օդում մնալու համար հարկաւոր է տաք հագնւել։

Օրգանիզմի դիմադրական ոյժի աւելացնումը

Ամեն մի մարդ իւր ձեռքին ունի միջաց, որով նա կարող է տուբերկուլոզից վարակման դէմ կռւելու մէջ յաղթուղ գուրս գալ։ Իս շնչառական օրգանների ամրացումն է, որ կարելի է ձեռք բերել ջրէ նպատակայարմար գործածութեամբ։

Բերանի մասերի խնամքը

Առաւօտները հարկաւոր է բերանը ողողել թարժ ջրով, նոյնը պիտի անել քթի հետ։ Այդպիսով հաւաքւած փոշին անհետանում է և մաղասալին թաղանթները ստանում են առողջ գրգռումներ։ Ուտելուց յետով բերանը

կերակրի մնացածներից նոյնպէս պիտի մաքրել. շատ օդ-
տաւէտ է առտմների մաքրութիւնը:

Մարմնի լւացումը բժայի շաբաթ

Ոչ մի բան այնքան չի պաշտպանում մարդուս ցրտից,
ինչքան մարմնի սիստեմատիկ լւացումը սառը ջրով: Տա-
րաբախտաբար շատերը մինչև օրս այս բանի հակառակն
են համազւած: Այս սխտլ կարծիքը պիտի թողնել: Ոչ ոք
իւր ննջաւանից առաւօտները չպիտի դուրս գալ մինչև որ
մարմնի վերին մասերը և ոտները չլւանալ սառը ջրով ե-
րբչորացնի: Այս նախազգուշութեանը կարող է դիմել ամեն
ոք, որովհետեւ դրա համար հարկաւոր է միալն ջուր, բայց
իհարկէ բաւականին մեծ քանակութեամբ: Ուրեմն թող-
նենք այն փոքրիկ լւացարանները, որոնք իրենց չափով
մեծ չեն թէլամաններից: Ամեն մի ննջարանում պիտի
գտնուի բաւականաչափ մեծ աման: Սառը ջրով լւացւելը
միաժամանակ լաւ ազդեցութիւն է ունենաւ կաշվի և
շնչառական գործարանների վրայ: Ջրով սրսկելը ակամայ
առաջ է բերում խորը շնչառութիւն, որի շնորհիւ թոքերը,
որ քնած ժամանակ շատ մակերեսութալին են շնչում,
ուղղում են հենց առաւօտւանից և լցում արիւնով:

Ժօղովրդական բաղնիսներ

Կարելին չափ տարածւած հասարակական մաքուր և
էժան բաղնիսը տուբերկուլեօզի դէմ կռւելու համար ոչ
պակաս լաւ միջոց է, քան բժշկական հիմնարկութիւնների
կառուցումը: Այստեղ առաջանների և դուշի դոլութիւնը
շատ է ցանկալի: Երեխաները ուսումնարանական հասակում

շաբաթը մէկ անգամ պիտի բաղնիս գնան, իսկ ամառը
ամեն օր լողանան: Լողանալը և լողալը մի-մի հիանալի մի-
ջոցներ են ջղերի և թոքերի զարգացման համար: Սա-
կայն այս բալոր ասածները վերաբերում են առողջ մարդ-
կանց:

Հիւանդները և քնքոյշ մեծացածները մալմնի ամրա-
պնդելուն պիտի դիմեն զգոյշ և փաքր առ փոքր: Սկզբում
պիտի չոր կաշին ջրով տրաբել, յետով չորացնել, իսկ յե-
տոյ անցնել. Փրանսիական օղիով տրոբելուն: Այդ օղին
քիչ քիչ պիտի փոխարինել սառը ջրով: Ի վերջոյ պէտք
է սկսել սառը ջրով լւանալ, դուշ դորձածել և լողանալ:
Այդպիսով ամենաքոյշ մեծացածները, որոնք առաջ շատ
հեշտ էին մրսում, կարող են փաքր առ փոքր իրենց մար-
մինը շատ լաւ ամբապնդել:

Արձակուրդային զարութներ եւ նաւ-ուսումնարաններ

Գեղձախտով տանջւող երեխանների ծնողների ուշագրու-
թիւնը պիտի դարձնել այսպէս կօչւած՝ արձակուրդային
գաղութների և նաւ-ուսումնարանների վրայ: Այստեղ վե-
րականգնում են իրենց առողջութիւնը այն երեխանները,
որոնք գժւար են առողջանում պլեքիտից, թոքերի բոր-
բոքումից, կարմրուկից, կօկլիւզից և ոսկորների փտելու
հիւանդութիւններից լետոյ:

Մարմնի ամրապնդումը

Բժիշկները ամեն օր նկատում են, որ այն մարդիկ,
որոնք վախում են եղանակների փոփոխութիւնից և ամե-
նափոքր քամի փչելուց, ամենից շատ են ենթարկւած

մթսելու և թռքերի ու շնչափողերի բորբոքման, Մարտկուս օրգանիզմը հիանալի կերպով կարող է տանել եղանակի փոփոխություն և անտեղի զգուշութիւնն է, որ թռւշացնում է օրգանիզմի այդ օգտաւետ ընդունակութիւնը Յուրաքանչյուր երբէք տուբերկուլեօզին չի նպաստում, ինչպէս այդ յաճախ սխալմամբ կարծում են, Խոլոնդիալի բնակիչների մէջ մենք նկատում ենք հիւանդութեան համարեաթէ քացակալութիւնը, Այդ պատճառով մեզ և ուրիշներին պիտի սովորեցնենք կանոնաւոր կերպով օգտուել թարմ օգից տարւայ ամեն ժամանակ, Թոյլ կրծքի տէր մարդկանց հարկաւոր է տանը նստել, երբ դուրսը սաստիկ քամի է, որովհետեւ վերջինը չորացնում է օդը և մեծ քանակութեամբ փոքի է առաջացնում:

Մարտնի դիմուլ

Մարմնի կուշցած դիրքը արգելում է հանգիստ և կանոնաւոր չնշառութիւնը, որ մեծ նշանակութիւն ունի թոքերի առողջութեան համար։ Օգտակար կլինէր ամենքին լիշեցնել զինւորական կանոնը՝ «Դրուխդ բարձր։ Կուրծքդ առաջ։» Սակայն կանոնաւոր շնչելը մի իսկական արւեստ է։ Պիտի շնչել ոչ թէ բերտովի, այլ քթով, որպեսպի օդը, տաքանալով և ազատւելով նրա մէջ գտնւող փոշուց, չկարողանայ գրգռել շնչառական խորը գտնւող ուղիները։ Մարմնի ուժեղ շարժւածքների ժամանակ և քամու դէմ խօսելը ևս վնասակար է։

Ենչառութեան դժւարացումը

Բերանի և քթի մասերում առաջացած պօլիպները
դժւարացնում են շնչառութիւնը։ Դրա հետեւանքը կա-

Պարապմունքի ընտրութիւնը

Մասնաւոր կեանքում, երբ ընտրում են ծառայութեան այս կամ այն ձեւը՝ պարապմունքը, շատ քիչ են ուշադրութիւն դարձնում տողջութեան վրալ։ Պետութիւնը շատ խելացի կվարւէր, եթէ իւր պաշտօնեաներից առողջութեան վկալական առհանգէր։

Այն երիտասարդները, որոնք ժառանգաբար վարակ
ւած են տուրերկույթօզով, մանաւանդ թոլլ կուրծք ու-
նեցողները, չպիտի պարապեն այն արօֆէսիաներով, որ
ըստ իշխանության 22-րդ երեսում. Ալդպիսի օրգանիզմների
համար աւելի յարմար են բացօթեալ պարապմունքները
և այնպիսիները, որոնք Փիզիքական ոլժի լարում չեն պա-
հանջում, ինչպէս օրինակ՝ ալգեգուծութիւն, անփառա-
պահութիւն, երկրագործութիւն և այլն:

Ուժեղ, բայց գեղձախտաւոր երեխաների համարյան
րոնք տանջւած են կաշվի քորով, ականջների հոսումով
և ալյն, ծովալին ծառայութիւնը աւելի յարմարէ, բայց
իսկական նաւաստիի և ոչ թէ հնոցավառի կամ մեքենա-
վարի ծառայութիւնը։ Մի քանի ժարդի ծառալելուց յե-
տոք՝ նրանցից դուրս են գալիս առողջ տղամարդիկ։ Ծա-
վալին զինուոր հաւաքելու ժամանակ հարկաւորէ ուշա-
դրութիւն գարձնել այս բանի վրայ և սահմանափակ
կայ Պիտի մատնացուց անել և այն հոգանքը, որ նկատ-

ւում է գիւղերից դէպի քաղաք։ Մարդիկ, որ տըամադըր՝
ւած են դէպի տուբերկուլեօզը, մեծ մասամբ ունեն աշ-
խոլիք բնաւորութիւն և գտնելով կեանքը գիւղում աւե-
լի գժւար, վազում են դէպի կենտրոնական քաղաքներ։
Բայց միւնոյն ժամանակ ազգաբնակութեան աւելանալը
և աշխատանքի գժւարութիւնը, որ իւր հերթին ազդում
է անդւելու վրայ, մեծացնում են տուբերկուլեօզը վա-
րակւելու վաանգը քաղաքացիների համար։

Ընդհանուր վտանգաւոր պայմաններ

Ժողովրդի մէջ մի շարք արմատացած սովորութիւն-
ներ նպաստում են տուբերկուլեօզի տարածման, մի կող-
մից թուլացնելով օրդանիզմի դիմադրական ոլժը, միւս
կողմից կրկնակի հնարաւորութիւն տալով սազմերին թա-
փանցել օրդանիզմի մէջ։

Պանդոկների կեանքը

Ալստեղ հարկաւոր է լիշել այն հին և վատ սովորու-
թիւնը, որ մարդիկ իրենց ամբողջ հանգստութեան ժա-
մանակը՝ անց են կացնում ծխով լի և կեղտոտ պանդոկ-
ներում։ Եղանակի ամենալաւ ժամանակը մարդիկ ժամե-
րով նստում են ալստեղ, մինչդեռ թարմ օդում նրանք
կարող են նոր ոլժեր հաւաքնել, կարծես թարմ օդի ար-
ժէքը նրանց համար սչինչ է։ Ինչ տխուր երկութ է տես-
նել, թէ ինչպէս բանւորները կիւրակի օրերը մինչեւ կէս
գիշեր նստում են այդ կեղտոտ և տաք սենեակներում և
վերադառնում են տուն ցուրտ և խոնաւ լուսաբացին։
Տրակտիրներում վատնւում է և՝ ժամանակ և՝ փող, բայց

ամենից շատ տուժում են առողջութիւնը և ընտանեկան
երջանկութիւնը։ Պետութիւնից պահանջում է աւելի
կտրուկ օրնսդրութիւն արբեցողութեան գէմ և խիստ
հսկողութիւն ոգելից խմիչքների ծախելու վրայ, մանա-
ւանդ երբ ծախում է երիտասարդներին։

Անհրաժեշտ է պատանեկութեան մէջ պրոպագանդ
մղել արբեցութեան դէմ և աւելի գունաւոր կերպով ցոլց
տալ նրա տխուր հետեանքները։

Ուսումնարաններ

Ուսումնարան յաճախելու վատնգը կարելի է հեռա-
ցնել յաճախակի և նպատակալարմար մաքրութեամբ։ Նախ
և առաջ պիտի պահանջել, որ երեխաները ուների ցեխը
մաքրեն երկաթեալ քերիչով, վերնազգեստը թողնեն նա-
խանենեակում և պարապմունքների ժամանակ մարմնին
ուղիղ գիրք տան։

Թոքախտաւորները ուսումնարան չպիտի թողնեն։
Առողջացողների վաղաժամ յաճախումը գպրոց նոյնպէս
կարող է վնասակար լինել։ Ուսումնարանի ամենաշանա-
ռոր հարցերից մէկը պիտի լինի՝ ներշնչել երեխաներին
պահպանել իրենց առողջութիւնը և այդ ներշնչումը պի-
տի լինի ալսպէս, որ նրանք ընդմիշտ լիշեն ալգ։ Հարկա-
ւոր է նրանց մէջ զարգացնել առողջութեան գիտակցութիւն,
որպէսզի նրանք պարտք համարէին հսկել ոչ միայն իրենց,
այլ և ուրիշների առողջութեան վրայ։ Տարաբախտաբար
այս ուղղութեամբ շատ քիչ բան է արած։ Արժանի է ո-
րինակ վերցնել Նվելցարական ուսուցիչների և քահանա-
ների առողջապահական-կրթական սիստեմից, որ ընդուն-

մարմէն շաբ կոնտօններսւմ։ Առ ողջութիւնը ժողովրդա-
կանացրած ձեւը կարող էին դաստանգել բժիշկները,
որդիհետև նրանք ծանօթ են ժողովրդի սովորութիւննե-
րինան նպասպաշարմաւնքներին։

Եկեղեցիներ

Յու Մեզ, բժիշկներիս լաւ յայտնի է, որ մի քանի պարա-
գաներում եկեղեցի յաճախելը տուբերկուլեօզի տարած-
ման մի Փակտօր կարող է լինել։ Տու բժիշկուլեօզալին կօնդ-
րէսում պրօֆ. Elligge մատնանիշ արեց այդ հանգաման-
քի վրա!։

Եկեղեցիներում օդը մեծ մասամբ լինում է հեղձու-
ցիչ և ցուրտ։ Ճնրադրութեան ժամանակ բաւական փոշի
է բարձրանում, որ յետով շնչում են աղօթողները։ Թո-
քախտաւորները աւելի շատ են յաճախում եկեղեցի և այն-
տեղուժգին կերպով տարածում իրենց հիւանդութեան
սաղմերը, որովհետև վատ օդը նրանց ստիպում է հազար։
Բացի այդ, յաճախ մարդիկ մտնում են եկեղեցի տաքա-
ցած և թրջած։ Որոշ օրերի եկեղեցական կանոնները պա-
հանջում են, որ աղօթողներն եկեղեցի գնան ծոմ պահած։
Որ արմատի պայմաններում օրգանիզմն աւելի է են-
թարկում տուբերկուլեօզին, դրանում ոչ ոք չի կասկա-
ծի։ Բայց միթէ հոգեօրականութեան համար դժւար կլինի
ու շաղրութիւն դարձնել այդ հանգամանքի վրայ և հոգ
տանել, որպէսզի եկեղեցիները շուտ շուտ քամու արւեն
մաքրուեն։ Կրանով նրանք թոքախտաւորներին և առող-
ջացողներին զգուշացրած կլինեն աւելորդ յաճախումներից։
Խողակազմ երեխաներին, մանաւանդ ձմեռը, վնասակար-
եցաւնկ չաքել եկեղեցու սառը սալալատակին։

Դիակատներ

Հարկաւոր է ամենուրեք ունենալ դիակատներ։ Երբ
նրանք բացակալում են, այն սենեակը, որտեղ մեռնող է
եղել, երբէք հիմսական ախտահանութեան չի ենթարկ-
ում, մինչև որ մեռնողի դիակը դուրս չի հանւում։ Միեւ
նոյն ժամանակ գիշերալին հսկումները, որ ընդունւած
են շատ տեղեր, պիտի թողնել։ Հազարաւոր դէպքեր են
եղել, երբ երիտասարդ օրգանիզմներ դիակներից ընդու-
նել են մահացուցիչ սաղմերը։ Դիակներ համբուրելլ պի-
տի խիստ արգելել։

Երկարուղիներ

Երկաթուղու գծերի վրայ տուբերկուլեօզի դէմ պի-
տի ամեն միջոց ձեռք առնել։ Նախ և առաջ կուպէների
թաւշեալ կտորների տեղ պիտի գործածել ալնպիսիները,
որ կարելի լինի լւանալ։

VI

ԱՆՀՐՍԺԵՇՏ Ա.ՈՒՂՂԱՊԱՀԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԱՅՆ
ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱՐ, ՈՐՈՆՔ ՄՇՏԱՊԷՍ ԵՆԹԱՐԿ-
ԻԱԾ ԵՆ ՎԱՐԱԿՄԱՆ ՎՏԱՆԳԻՆ

Տուբերկուլեօզի դէմ կռւելու լիշեալ միջոցները ա-
ռանձնապէս այն մարդկանց ուշադրութիւնը պիտի գրա-
ւեն, որոնց պարապմունքը նպաստում է այդ հիւանդու-
թեան ծագման (եր. 22)։ Աւելի պարզելու համար հա-
7

մառօտ կերպով լիշենք նախագծութեան անհրաժեշտա
միջոցները՝

1) Հեռացնել թոքախտաւորներին բանորների հան-
րակացարաններից։

2) Թքամանների անհրաժեշտ թիւը. նրանցից պիտի
օգտւեն թէ հիւանդները և թէ առողջները։

3) Արհեստանոցները շուտ շուտ մաքրել իսկ պա-
րապմունքներից ազատ ժամանակ քամու տալ։ Արհեստա-
ւորները, ինչպէս լնդունւած է Խտալիայում, տաք եղա-
նակներին պիտի աշխատեն իրենց տան դռան առաջ կամ
ալգում։

4) Արհեստանոցում շուտել և ժամանակ չանցկացնել։

5) Գործի ժամանակ մարմնին լստ կարելու ուղիղ
գերք տալ,

6) Այն վնասը, որ ստացւում է պարապմունքներից,
վարձատրել համապատասխան սպորտով զւարճութիւննե-
րով՝ թիւավարել, սար բարձրանալ, զբոսնել, բաց օդում
խաղալ և այլն։ Շնչառական օրգանների սիստեմատիկ և
կանոնաւոր մարզումները։ Յաճախ հարկաւոր է հետեւեալն
անել՝ ձեռքերը դնելով ազդրերի վրայ մի քանի անդամ
խորը ներշնչել և դուրս շնչել։

7) Առողջ բնակարան և զլիսաւորապէս արձակումտ-
քուր ննջարան։ Փոշի լնդունող թաւշեալ կարասիների,
գորգերի, վարագոլրների տեղ օգտւել փայտեալ և կաշւէ
կարասիներով և առհասարակ այնպիսի առարկաներ գործ
ածել, որոնց լւանալը հեշտ լինի։

8) Անձնական մաքրութիւն և մարմնի ամրապնդում։

9) Հարկաւոր է անմիջապէս բժշկի դիմել հիւանդու-
թեան նոյնիսկ ամենաթոյլ նշաններին։ Առողջացողները

պիտի առանձին զգուշութիւն պահպանեն։

VII

ՏՈՒԲԵՐԿՈՒԼԵՈԶԸ ԲՈՒԺԵԼԻ Է

Եատ քիչ ժամանակ է անգել, երբ առուբերկուլեօզ
դիագնոզը բոլորի համար մահւան դատավճիռ էր, որը
շուտով պիտի կատարւէր։ Բայց բժիշկներիս նոյնպէս վա-
ղուց լայտնի էր, թէ նրանից խուսափել կարելի է, թէ
որոշ պայմաններում նա բժշկում է և այս բանը խրա-
խուսում է մեզ շարունակելու համար կռիւը չարիքի դէմ։
Վերաբոյժները ամեն ժամանակ տուբերկուլեօզից վարակ-
ւած յօդերը չեն անդամահատում, այլ բժշկում են նրանց
և ուրիշ միջոցներով։ Դիակների բացումը ցոյց տւեց, որ
զանազան հիւանդութիւններից մեռնողների թոքերում
գտնուում են որոշ մասեր, որոնք բժշկւած են տուբերկու-
լեօզից։ Brehmer-ի և Dettweiler-ի սանատօրիալի առաջին
հիմնադիրների մեծ գործն այն եղաւ, որ նրանք միշտ
քարոզում էին, թէ տուբերկուլեօզը կարելի է բժշկել։
Բարեբախտաբար այս համոզումը ժողովրդի մէջ աւելի և
աւելի է տարածւում։

Որ թոքախտն իսկապէս կարելի է բժշկել, այդ ցոյց
է տալիս Schaper-ի հետեւեալ թւերը։ Բերլինի Charité հի-
ւանդանոցում հիւանդների $44,9 - 55,6\%$ -ը բժշկում
էին կամ որոշ թեթեւութիւն ստանում։ Մինչդեռ հիւան-
դանոցներում գլխաւորապէս գործ ես ունենում ծանր հի-
ւանդների հետ, ալդ պատճառով միտք չունի հիւանդից
ծածկել ճշմարտութիւնը նրա հիւանդութեան մասին։
Ծածկելը այն արդիւնքը կունենալ, որ հիւանդը կսկսի

քիչ ու շադրութիւն դարձնել այն միջացների վրայ, որոնք դործ են դրւում նրա առողջութեան համար և պաշտպանելու են վարակումից նրա շրջապատողներին:

Հիւանդութեան նշանները

Բժշկութեան յաջողութիւնը նախ և առաջ կախւած է հիւանդութեան նախօրօք իմանալուց: Սակայն, ինչքան էլ տուբերկուլեօզը յաճախ պատահի, հիւանդութեան պրօցեսի սկզբում նրա դիսգնոզը այնքան էլ հեշտ չէ որոշել: Նրա տռաջին նշանները շատ անորոշ են և հիւանդը կարող է կամ բոլորովին ուշադրութիւն չդարձնել նրանց վրայ, կամ վերագրել մարմսի միւս օրգաններին՝ օրինակ ստամոքսին: Որպէս կասկածուոր նշաններ, մանաւանդ հիւանդութեանը տրամադրւածների վերաբերութեամբ պիտի ընդունել՝ ընդհանուր թուլութիւնը, դէմքի վատ տեսքը, ստամոքսի մէջ սեղմումները, բղկոցները, խուպոտ, խզազող ձայնը, ջերմը երեկոներին, արագ գարկերակը, արիւն թքելը և կանանց համար ամսականի խանգարումը:

Միայն բժիշկը կարող է այս երևոյթների պատճառներն իմանալ: Եթէ կպարզէի, որ իսկապէս թոքախտի հետ գործ ունենք, հարկաւոր է, որ հիւանդը հաւատ ընծալէ բժշկին: Նա չպիտի իհարկէ պահանջի, որ հիւանդութիւնը մի քանի շիշ գեղերով բժշկւի: Պիտի հրաժարւել այն մտքից, թէ թոքախտի դէմ գոյութիւն ունի որևէ հաստատ դեղ: Մեր ձգտումը կարող է ուղղւած լինել դէպի այն, որպէսզի հեռացւեն բոլոր վնասակար ազդեցութիւնները և կարելի լինի ամեն հնարաւոր միջոցներով պաշտպանել օրգանիզմը: Սակայն շատ յաճախ հիւանդները չեն ցանկանում հասկանալ այդ և դնում են

շարլատանի մօտ, որը նրան խոստանում է իսկոյն և եթքժշկել: Բայց ժամանակն անցնում է, բարենպաստ մօմենտը կորչում է և խելացիութիւնը շատ ուշ է երևան գալիս:

Բժշկութիւնը ամեն մի առանձին դէպքում ունի իր ուրախ ընթացքը և պիտի տարւի բժշկի ղեկավարութեամբ: Նատ հեղինակաւոր մարդկանց կարծիքով, ինչպէս օրինակ Krause-ի, Bandelier-ի, Gabrijelovici-ի, Roerke-ի, Spengler-ի, Löwenstein-ի, Sahle-ի և շատ ուրիշների, ամենալաւ հետևանքների կարելի է հասնել տուբերկուլինների սրսկումներով և «գիգիէնօ-դիէտետիկ» միջոցով: Այստեղ գլխաւոր ուշադրութիւնը դարձնուում է լաւ կերակրւելու և արտաքին բարենպաստ պայմանների վրայ:

Թոքերով հիւանդների սանատօրիաները

Ներկայումս սանատօրիաներ շինելու հարցն առաջին հոգատարութեան առարկան է: Այս դէպքում երեք նպատակ է դրւած:

- 1) Բժշկել հիւանդներին.
- 2) Նրանց հեռացնել առողջներից, որպէսզի հիւանդութիւնը չտարածւի.
- 3) Սովորեցնել հիւանդներին վարել առողջ կեանք, որպիսին նրանք կարող են քարոզել հիմնարկութիւնից դուրս գալուց յետոյ:

Չի կարելի չ'ողջունել նոր սանատօրիաների բացւելը, մանաւանդ էժան և ձրի սանատօրիաները, չէ որ նրանց թիւը եթէ մը տասն անգամ էլ շատացնենք, այն ժամանակ էլի շատ քիչ կլինէր, եթէ աչքի առաջ ունենանք թոքախտաւորների այն հսկայական կօնտինգենտը, որը

մեծ կարիք ունի նրանց:

1910 թւի Մոսկվայի հակաթոքախտային համագումարում ուռւս թոքախտագէտների մեծ մասը այն կարծիքի էր, որ աւելի նպատակայարմար է թոքախտաւորներին բժշկել հիւանդանոց սանատօրիաներում, որից յետով բժշկութիւնը շարունակել երթևեկների բուժարաններում, աչքի առաջ ունենալով. որ բաւարար թւով մեծածախս սանատօրիաներ կառուցանելը մեր երկրի միջոցներից վեր րան է և շատ կողմերից չէ համապատասխանում մեր ժողովրդի մեծամասնութեան կետնրի պայմաններին. Քաղաքների շրջակայքում յատուկ կազմակերպած սանատօրիա-հիւանդանոցները. որոնք մատչելի են հիւանդների բժշկութեան թոքախտի զարգացման տմեն շրջաններում և կարող են կառուցւել քաղաքի ծալրերում, աւելի փոքր ծախքով կառող են մօտաւորապէս բժշկութեան նոյն հետեանքներն ունենալ, ինչ որ սանատօրիաներում:

Ես վերոյիշեալ համագումարում, ինչպէս թոքախտի դէմ մաքառող կովկասեան հակաթոքախտուին թնկերութեան պատգամաւոր, թէպէտե Աբասթումանում սանատօրիա հիմնելու գաղափարը պաշտպանեցի, բայց աչքի առաջ ունենալով Գերմանիայի քսանամեալ փորձի հետեանքները, պէտք է խոստովանեմ, որ տուրերկուլեօդից երկիրն ազատելու (այսինքն բառիս ընդուրձակ մտքով՝ հասարական մաքառման) տեսակէտից՝ ներկայումս սանատօրիաներին մեծ նշանակութիւն վերագրել, հակառակ նախկին ակնկալութիւններին, անհնար է. ինչպէս բժշկական հիմնարկութիւններ, ժողովրդական սանատօրիաները ինքն ըստ ինքեան շատ քիչ բան են տալիս և միայն մի շարք ուրիշ հակատուբերկուլեօդային հիմնարկութիւնների հետ,

ինչպէս մի առանձին օղակ միջոցների ամբողջ շարքի մէջ, նրանք իրաւամբ ստանում են իրենց պատկանող խոշոր նշանակութիւնը:

Գերմանիայում վաղուց արդէն պարզւած, է որ մեծ մասամբ, սանատօրիալից դուրս գալուց յետով, չի կարելի հիւանդին իր կեանքի նախկին պայմանների և աշխատանքի մէջ թողնել, որ անհրաժեշտ է մի առժամանակ նրան այսպէս ասած՝ Übergangszeit (անցողական շրջան) անցկացնել տալ, ելք նա սանատօրիալում ոչինչ չանելուց աստիճանաբար անցնում է աշխատանքի՝ այսպէս կոչւած՝ Waldstation Eiholungsheim-ում:

Այնուհետեւ ակներեւ եղաւ, որ անհրաժեշտ է հիւանդի բժշկութեան ամբողջ ժամանակամիջոցներ բաւարար չափով ապահովել նրա ընտանիքը, որովհետեւ առանց սրան հիւանդը զբկւում է հոգեկան հանգստութիւնից, լաւ չէ բժշկում և վաղաժամ ընդհատում է բժշկութիւնը:

Խոքախտաւորներին օգնելու բոլոր զանազան տեսակները Գերմանիայում իրականանում են մի շարք առանձին առանձին հիմնարկութիւններով (պետական հիմնարկութիւններ, մասնաւոր ապահովագրող ընկերութիւններ, հիւանդանոցային և ինվալիդային դրամարկղներ, Կարմիր խաչի ընկերութիւն), մասնաւոր բարեգործութիւններ և ալլն, և այլն), որոնց չի կարելի շուտով իրագործւած տեսնել մեզ մօտ՝ Ուսւաստանում:

Բայց զբանից, փորձը ցոլց է տւել, որ յատուկ հիւանդանոցներում և նոյնիսկ տանը թոքախտաւորները պակաս չեն բժշկւում, քան սանատօրիաներում և որ առհասարակ բժշկութեան վերջնական յաջողութիւնը կախւած է ոչ այսքան սանատօրիաներում սաացուած անմի-

ջական լաջողութիւնից, որքան ընտանեկան վիճակի այն պայմաններից, որոնց մէջ ապրում և աշխատում է այնուհետև հիւանդը։ Ներկայումս հասարակական գործիչները ուշադրութիւնը սանատօրիաներից անցնում է դէպի հիւանդանոց սանատօրիաները և «Ծոքախտովի հիւանդների խնամակալութիւնները», որոնք հաւաքում են Ծոքախտաւորներին, տեղաւորում հիւանդանոցներում, նիւթապէս օգնում և՝ հիւանդներին և՝ նրանց ընտանիքներին, հոգում բնակարանալին պայմանները բարեփոխելու մասին ևալն, ևալն։

Ֆրանկֆուրտի մօտ Falkenstein սանատօրիա-հիւանդանոցում Dettweiler-ը փալլուն կերպով ապացուցեց, որ Ծոքախտը բժշկուում է ամեն տեղ, ամեն կիմայում և ամեն երկրում։ Նրա բժշկութեան հետեանքներն այնքան համոզիչ էին, որ լեռնային կլիման կորցրեց իր գերակշռող նշանակութիւնը և նկատեց ինչպէս երկրորդական պամաններից մէկը։ Ներկայումս Գերմանիայում գոյութիւն ունեն մի շարք սանատօրիաներ, կառուցւածքաղաքների շրջակալքում (Loslau Սիլէզիայում, Planneg Բաւարիայում, Belxig Բերլինի մօտ), որոնք բժշկութեան հետեանքների կողմից լեռ չեն մնում լեռնալին կարաններից։

Ամփոփելով բոլոր ասածներս, ես ինձ թոյլ եմ տալիս հետեալ ցանկութիւնը արտայալուն։ ՚ի նկատ առնելով, որ մեր Թէհրան քաղաքի վրայ էլ պարտականութիւն կալ կանոնաւորել իր Ծոքախտաւոր հիւանդ քաղաքացիների բժշկութեան գործը, անհրաժեշտ է որ մեր քաղաքն էլ ձեռնարկէ հիմնել Թէհրանի շրջակալքում յատուկ հիւան-

գանոց-սանատօրիա՝ իր հիւանդ քաղաքացիների բժշկութեան համար Ծոքախտի զարգացման ամեն շրջանի հանդէպ։

Զընալած որ Նոր-Զուղալում Ծոքախտը ահռելի ծաւալ է ստացել և ազգաբնակութեան մօտ $10^0/0$ -ը մատնած է այդ ժողովրդական դժբախտ ցաւին, Նոր-Զուղայի հայութիւնը դէպի կռւի հարցը Ծոքախտի դէմ բոլորովին անտարբեր է վերաբերւում և հակաթոքախտային միջոցները աննշան են։ Միանդամայն անհրաժեշտ է որ Նոր-Զուղայում հակաթոքախտային ընկերութիւններ կազմակերպել Ծոքախտի դէմ կռւելու համար։

Պարզ բան է, որ այս նոր կազմակերպւած ընկերութիւնները գեռես չեն կարող իրագործել այն ամենը, ինչ որ հարկաւոր է նպատակաւոր կռիւ մզելու համար Ծոքախտի դէմ։ Նոր կազմւած ընկերութիւնները իրենց սկզբնական գործունէութեան շրջանում պէտք է տարածել ժողովրդի մէջ օգտակար տեղեկութիւններ այս հիւանդութեան մասին և կեանքի մէջ անցկացնել այն առողջապահական և սանիտարական պահանջները, որոնք կազմում են ինքնապաշտպանութեան հիմունքներ այս չարաբաստիկ հիւանդութեան դէմ։ Այդ նոր կազմւած ընկերութիւններին օգնելը բարեգործութիւն չի լինել, այլ ամեն մի քաղաքացու պարտականութիւն, որի կատարումը իր մերձաւորների ինքնապաշտպանութեան մի ակտ է միայն կործանիչ հիւանդութեան դէմ։ Միմիայն միահամուռ ոլժերով կռւելու ճանապարհով մեզ ըկ լաջողւի հաս-

նել այն բանին, որով արդէն կարող են պարձենալ եւրո-
պացի ժողովուրդները, այն է մահացութեան և հիւան-
դութեան նւազումը թաքախտից իրանում, և մասնա-
ւորապէս Նոր-Ձուդոյում։

ՊՐՕՖ. ԲԺՊ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑԻ
ՏՊԱԳՐԻԱԾ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԵՐԸ

1. Meningitis tuberculosa Փերմաներէն լեզով 4 մարկ
2. Туберкулез мозга как первичное заболевание 75 коп.
3. Туберкулез и общедоступные меры для барыбы 50 коп.
4. Տուբերկուլեօգ եւ նրա դէմ կուելու հանրամասչելի
միջոցներ 30 կոպ.
5. Նոյնը Վրացերէն լեզով 50 ,
6. Նոյնը Պարսկերէն » 2 ռիալ
7. Տուբերկուլեօգի բժշկման զարգախառն եղանակը
արևատական լեռնային արեւով եւ րէնտգենեան ճա-
ռազարյթներով 2 ռուբլի
8. Ժանտախտը եւ նրա դէմ կուելու հանրամասչելի
միջոցներ 76 կոպ.
9. Հիւանդութիւնների նախականիստումը զիւդում
35 կոպ.
10. Պրօֆէսիոնալ քունաւորումն քոսմորով
25 կոպ.
11. Բնակարանը եւ մատոր աշխատանիր
30 կոպ.
12. Պիտուայ ճանգիս 25 կոպ.

13 Լացարաբերի պրօֆէսիոնալ հիւանդութիւններ

25 կոպ.

14. Комбинированный способ лечения Туберкулеза легких ис-
кусств. горным солицем и Рентгеном 2 руб.

15. Меры для борьбы с народными болезнями путем открытия
выставок. 75 коп.

16. Лечение рентгеновскими лучами легочного туберкулеза
75 коп.

17. К вопросу о благоприятных исходах Туберкулезного менингита
52 руб

18. Մալարիա և նրա դեմ կուելու հանրամատչելի
միջոցներ 3 րփակ

19. Հակարռախմային հօնգրեսներում ակադեմիա-
կան նարգերի ընդունություն 1 րուբ. 50 կոպ.

20. Թոքախոսը և դպրոց 75 կոպ.


21. О лечении туберкулеза легких высоких горах 5 руб.

22. Խօլերան և նրա դեմ կուելու միջոցներ. 50 կոպ.

23. Սիմֆիլիս իբրև ժողովրդական մեծ դժբախտու-
թին 3 րփակ



(Հ)



(40)



MAL031152

